

КРЕСТЬЯНСКАЯ **ИЗДАТЕЛЬСТВО
ГАЗЕТА** **«ШЕМСА»**

Բ. ՌԵԶՆԻԿՈՎ

ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ԳՐՈՒՆՑ և
ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԱՒՐՆԵՐԸ

Դասախոսություն վեցերորդ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄՐԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Դասախոսությունները լույս են տեսնում „Խորհրդային
Հայաստանի պատ. Խմբագիր Հ. Հովհաննեսի Առաջնորդ
քննիանուր Խմբագրությամբ

07
Դ-28

ՀԱ(Բ)ԿԱԿ իրատակչություն — „Խորհրդային Հայաստանի

Ց Ե Ր Ե Վ Ա 6

1936



24 JUL 2013

14989

07
Հ-28

23 JUN 2009

Դասախոսությունները լույս են ընծավում „Խորհրդ. Հայաստանի խմբագրության կից կազմակերպված մերողական հանձնաժողովի կողմից, իմմբ ընդունելով „Կրեսոյանսկայա Գրագետաւոյի ուսումնական կոմիտեի հրատարակած գասախոսությունները:

Կոլտնեսային-բրիգադային պատի քերթերի խմբագիրների Հայաստանի հեռակա ուսուցման գասընթացների զեկավար՝ ԱԽՈՐ.Հ.՝ բանգյուղբրդակիցների բաժնի վարի՝ Ս. ՄԱՐՏԻՆՅԵՍ.՝

ԴԱՍԱՌԱՍՏԻՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՑՍ ԵՆ 8ԵՎ-ՆՈՒՄ ՀԵՏԵՎԵԱԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ.

ՈՒԿՐԱՅԵՐԵՐԵՆ,
ԲԵԼՈՌՈՒՍԵՐԵՐԵՆ,
ԹԱԹԱՌԵՐԵՐԵՆ,
ԿԱԶԱԿԵՐԵՐԵՆ,
ՎՐԱՅԵՐԵՐԵՆ,
ՀԱՅԵՐԵՆ,
ԹՈՒՐՖԵՐԵՐԵՆ,
ԲԱՇԿԻՐԵՐԵՆ
ԳԵՐՄԱՆԵՐԵՆ
ՈՒԶԲԵԿԵՐԵՆ

Սբագրիչ՝ Ա. Հայովերդյան

Պատմական լիազոր Ա. № 1013

Գևահատի տպաբան

Գոտփեր № 540

Տիրաժ 2000

1936 ԹՎԱԿԱՆԻ ՍՏԱԽԱՆՎՅԱՆ ԳԱՐՈՒՆԸ ՑԵՎ
ԿՈԼՏՆԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

07
Հ-28

1936 ԹՎԱԿԱՆԻ ՍՏԱԽԱՆՎՅԱՆ ԳԱՐՈՒՆԸ ՑԵՎ
ԿՈԼՏՆԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թուժենում ե գարունը, իսկ նրա հետ և դարնանացանը—գյուղատնտեսական արտադրության ամենապատասխանատու ժամանակաշրջաններից մեկը։ Թերթերի առաջ կանգնում են մի շարք կարևորագույն խնդիրներ, վորոնք բղխում են ներկա գարնանացանից—1936 թվականի ստախանովյան գարնանացանից։

Կոլտնտեսային պատի թերթերի մեծ մասն արդեն փորձ ունի, թե ինչպես պիտի աշխատել գարնանացանի ընթացքում։ Շատ կոլտնտեսային թերթեր արդեն ավելի քան հինգ տարվա այդպիսի փորձ ունեն։ Յեթե հաշվենք 1930 թվականից, ապա մենք արդեն թեվակղիսում ենք 6-րդ բոլեմբկյան գարունը, յերբ գարնանացանը կատարվում է նոր ձեռվլ—կոլտնտեսային պայմաններում։ Այժմ պատի թերթերը գիտեն, թե ինչից պիտի սկըսել և ինչպես ձեռնամուխ լինել գործին։ Մակայն, ամեն տարի կոլտնտեսությունների առաջ կանգնում են նոր խնդիրներ, վորոնք բղխում են կոլտնտեսությունների ամրապնդումից, ունեմորության աճումից։ Այդ խնդիրների մասին շատ լավ պիտի ժառածել, գորպեսզի կարելի լինի պատի թերթերի ողնությամբ սպելի հաջողությամբ ողնել գրանց կառարժանը։

Շատ բան, վոր առաջ պատի թերթերի կենտրոնական խընդիրներն եյին հանդիսանում, այժմ արդեն հետին պլանն են անշել, կամ բոլորովին դադարել են կարեւոր խնդիր լինելուց։

Մյուս կազմից, արդեն նոր ձեռվլ են գրվում աշխատանքի արտադրականության հարցերը, սերմացույի, ագրոտեխնիկայի և ընդհանրապես տեխնիկայի հարցերը։ Այսպես որինակ՝ տարեց առարի մեր մեքենատակտորային կայանները ավելի մեծ քանա-

կությամբ կոլտնտեսությունների յեն սպասարկում։ Պարզ բան է, վոր յեթե անցյալ տարի կոլտնտեսությանը մեքենատրակտորային կայանը չեր սպասարկում, իսկ այս տարի սպասարկելու յեն, ապա ուրեմն՝ այդ կոլտնտեսության պատի թերթի խընդիրության ել վորոշ չափով փոխվում են, հենց թեկուղ այն պատճառով, վոր անցյալ տարի նաև տրակտորների մասին չեր գրում, իսկ այս տարի պիտի գրի։ Այսպիսի որինակներ շատ ու շատ կարելի յերել։ Սակայն, անցնենք հարցի քննությանն ըստ երթյան՝ Ի՞նչ նոր խնդիրներ են դրված այս գարնանը կոլտնտեսությունների, ուրիշն և կոլտնտեսային պատի բերքերի առաջ։

ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ Ե

Արդեն յերկրորդ տարին ե, ինչ կոլտնտեսություններն աշխատում են նոր ձեռվլ—կոլտնտեսային կյանքի ստալինյան կանոնադրությամբ։ Անցած 1935 թվականը ամբողջ գյուղատնտեսության համար հզոր վերելքի տարի հանդիսացավ։ Զգալի չափով բարձրացավ հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը։ Մեր յերկիրը յերեք այդքան հաց, ճակնդեղ, բամբակ չեր արտադրել։ Այդ տարին աճեց նաև անասնապահությունը։ Ճիշտ ե, անասունների քանակը, բացի խոզերից, մեզ մոտ դեռևս ամելի քիչ ե, քան 1928 թվին եր, դեռ չի ծածկված այն կորուսոր, վոր մեր անասնապահությանը հասցըին կուլակներն ու վնասարարները։ Սակայն, անասունների քանակը վերջին յերկու տարվա ընթացքում այնպես արագ ե աճում, վոր կասկած չի կարող լինել, վոր մոտակա տարիներին մենք դգալի չափով ամելի շատ անասուն կունենանք, քան յերբեմցե ունեցել ենք։

Անցած տարին ցույց տվեց կոլտնտեսությունների հետագա ամրապնդումը, կոլտնտեսականների ունելորության հետագա աճումը։ Այս ամենը նախապատրաստեց գյուղատնտեսության ներկայիս՝ 1936 թվականի ել ամելի բարձրացման հնարավորությունը։ Յեթե փորձենք յերկու խոսքով ասել ներկա գարնանացանի և ամբողջ գյուղատնտեսական տարվա գլխավոր խնդիրը, ապա պետք ե ասենք հետեւյալը։ բերքատվության բարձրացում։

1935 թվի գեկտեմբերի 1-ին, սպասարկության կոմբայնավարնե-

րի ու կոմբայնավարությունների խորհրդակցությունում յելույթ ունենալով՝ ժողովրդի առաջնորդ ընկեր Ստալինն ասաց։

«Մենք հենց այժմ պիտի նախապատրաստվենք, վորպեսզի մոտիկ ապագայում, յերեք—չորս տարուց հետո հացահատիկի տարեկան արտադրությունը հասցնենք 7-8 միլիարդ գրթի»։

Ահա այն վիթիարի և միաժամանակ միանդամայն իրագործելի խնդիրը, վոր կանգնած և կոլտնտեսությունների առաջ։ Անցյալ տարի ԽՍՀՄ-ում արտադրվել ե ավելի քան հինգ և կես միլիարդ փութ հացահատիկ։ Մինչև Հոկտեմբերյան Մեծ սոցիալատական հեղափոխությունը մեր յերկրում տարեկան արտադրվում եր մոտ 4-5 միլիարդ փութ հացահատիկ։ Իսկ ներկա 1936 թվականին, ըստ կառավարության հաստատած պլանի, մենք պետք ե արտադրենք 6 միլիարդ, 380 միլիոն փութ հացահատիկ։ Այդ նշանակում ե համարյա 2 միլիարդ փութ ավելի հացահատիկ պիտի արտադրենք, քան հեղափոխությունից առաջ եր արտադրվում։

Բերքատվության առաջավորների—շքանշանակիրների, դյուզատնտեսության ստախանովականների փորձը հաստատում ե, վոր մենք կարող ենք կատարել այդ պլանը։ Այդ մարդիկ ցույց են տալիս նաև 1936 թվականի ստախանովական բարձր բերքատվության պլանի կատարման ուղիներն ու մեթոդները։

Աշխարհում և վոչ մի յերկիր չի կարող հացահատիկի արտադրանքի բարձրացման այդպիսի խնդիր գնել իր առաջ և մանականդ այդպիսի խնդիր լուծել։ Հացահատիկի արտադրանքի բարձրացումը յուրաքանչյուր կապիտալիստական յերկրում աղետ կառաջացներ և մեծ թշվառություն կրերել աշխատավոր գյուղացիությանը։ Ինչո՞ւ։ Վորովչետե այնտեղ հացն սպասող չեյին գտնի։ Յուրաքանչյուր կապիտալիստական յերկրում շատ ու շատ քաղցած ու կիսաքաղց մարդիկ կան, վորոնք հացի կարիք ունեն։ Սակայն և այնպես, շատ յերկրներում կապիտալիստները ամեն կերպ աշխատում են նվազեցնել հացահատիկի արտադրությունը, վորովհետեւ վաճառելու տեղ չունեն։ Կապիտալիստական տնտեսությունն այնպես և կառուցված, վոր նրա նպատակը վոչ թե բնակչության պահանջների բավարարումն ե, այլ շահույթ ստանալը։ Դրա համար ել կապիտալիստական հասարակության մեջ անխուսափելի բան ե միլիոնավոր մարդկանց սովորակությունը՝ հացահատիկի վիթիարի պաշարների կողքին, դրա հա-

ժամը ել կապիտալիզմը չե կարող ագելացնել հացահատիկի արտադրությանը: Յեվ վերջին տասնամյակում մենք արդեն շատ ենք տեսնել, վոր վորեւ կապիտալիստական յերկրում բերքատվության բարձրացումը գյուղացիության քայլայում և առաջ բերում, վորովհետեւ հացահատիկի մեծաքանակ վաճառքի գները խիստ ընկնում են, գյուղացիները չեն կարողանում իրենց պարտքերը վճարել, չեն կարողանում նորմալ ձևով վարել իրենց տընտեսությունը:

Հասկանալի յէ, վոր յերբ բերքը վատ և—ապա կապիտալիստական յերկրների գյուղացիների դրությունը նույնպես խիստ վատանում է: Նշանակում է՝ այստեղ վատ և և' ցածր բերքը, և' բարձր բերքը:

Մեզ մոտ՝ խորհրդային կարգերում բարձր բերքը բոլորին և հրճվանք պատճառում: Մեր տնտեսության միակ նպատակն է՝ բարձրաբեր բնակչության սրահանջները: Խորհրդային իշխանությունն ու բոլշևիկյան կուսակցությունն իրենց նպատակ են դընում՝ ամեն կերպ բարձրացնել բնակչության նյութական մակարդակը, վորպեսզի յուրաքանչյուր աշխատավոր ամեն ինչ առատ ունենաւե՛ս սպիտակ հաց, և' միս, և' կաթ, և' յուղ, և ամեն բան, ինչ վոր հարկավոր և մարդուն: Վորքան յերկրում ավելի շատ հացահատիկ արտադրվի, այնքան ավելի շատ կլինի և յուս բաներից: Սահման չկա մեր ժողովրդի բարեկեցության աճմանը, սահման չկա մեր յերկրի հարստության աճմանը:

Խորհրդային իշխանության գոյության ընթացքում մենք թիչ ջանք չենք գործադրել և այդ նախ նրա համար, վոր զենքը ձեռներիս ջախճախնք ամեն կողմից մեզ վրա հարձակված թշնամիներին: Հետո հարկավոր եր վերականգնել սրատերազմի ընթացքում ավերված տնտեսությունը: Այնուհետեւ խորհրդային իշխանությունն իր բոլոր ուժերը լարեց խոչսր արդյունարերություն ստեղծելու համար, վորպեսզի յերկրում լինի բավական քանակությամբ չուգուն և պողպատ, վորպեսզի արտադրվեն բավարար չափով տրակտորներ, կոմբայններ և ամեն տեսակ մեքենաներ, վորպեսզի ամեն կերպ ամրապնդվի մեր յերկրի պաշտպանությունը:

Խորտակելով բոլոր խոչընդուները, դեն չպատելով նվազողներին, ոպորտունիվուներին, ջախջախելով հակահեղափոխական տրացիխուներին, բոլշևիկյան կուսակցությունը մեծ Ստալինի

դեկավարությամբ աշխատավոր ժողովրդին տարավ դեպի ընդհանուր բարորության լայն ուղին: Այժմ մենք ամեն ինչ ունենք Ունենք մեծ հայրենիքը, ունենք մեր հարազատ բանվորացուղացիական կառավարությունը, ունենք անպարտելի կարմիր բանակ, վոր զինված և տեխնիկայի վերջին խոսքով, ունենք իռուզուարերություն, ունենք մեքենաշինական գործարաններ, ունենք կոլտնտեսություններ ու խորհունտեսություններ, ամեն ինչ ունենք: Այժմ մենք կարծ ժամանակամիջոցում կարող ենք հողի ու արդյունաբերության այնպիսի արտադրողականություն ծավալել, մթերքների այնպիսի առատության հասնել, վորի մասին աշխատավոր մարդիկ յերբեք յերազել անդամ չելին կարող:

1933 թվականի դեկտեմբերին ընկեր Ստալինը Դնեպրոպետրովսկի մարզի կոլտնտեսականների պատգամավորության հետ զրուցելիս ասաց, վոր յեթե կոլտնտեսականներն ազնվորեն աշխատեն և պահպանեն կոլտնտեսության գույքը, նրանք առատորն կունենան մթերքներ ու ամեն տեսակ բարիքներ: Այժմ մենք տեսնում ենք, թե ընկեր Ստալինի այդ մարդարեյական խոսքերն ինչպես են գործնականում իրականանում: Մի տարվա ընթացքում մենք հացահատիկի արտադրությունը կարող ենք, և պետք ե ավելացնենք համարյա մի ամբողջ միլիարդ փիզով:

Այս և մեր յերկրի ընդհանուր աճումից բղիսող իրադրությունը: Իսկ, ապա մի դիտեցեք թեկուզ հենց ձեր շրջանը, իր բոլոր տեղական պայմաններով: Վորքան մեծ փոփոխություն և տեղի ունեցել վերջին յերկու-յերեք տարվա ընթացքում: Տրակտորների, մեքենաների թիվն ավելացել և մի քանի անդամ: Արդեն կան պատրաստված կաղըեր, վորոնք կարողանում են զեկավարել այդ մեքենաները, ավելացել և հանքային պարարտանյութերի քանակը, վոր անհրաժեշտ են տեխնիկական կոլտնտերաններին, ավելացել ե նաև կոլտնտեսությունների կենդանի քաշող ուժը և այժմ այդ «ուժը» — լծկանները բոլորովին այլ կերպարանք ունեն քան առաջ, ուժեղացել և զեսցիպլինան կոլտնտեսություններում և ընդհանրապես ամրացել ե կարգ ու կանոնը: Թերություններ դեռ շատ կան, խոսք չկա, սակայն անվիճելի յե նաև այն, վոր բոլոր պայմաններն ու բոլոր հանգամանքներն այնպես մեծ չափով են բարելազվել, վոր շատ բան ինչ անցյալ տարիներին մեծ

գժվարությունների հետ եր կապված, այժմ կարելի յե կատարել հեշտ ու արագ, առանց վորեկ գժվարության:

Ստախանովյան շարժումը, վորի սկիզբը դրեց հանքափոր Ալեքսեյ Ստախանովը, արագորեն ծավալվեց արդյունաբերության բոլոր բնակավառներում:

Այդ շարժումը միաժամանակ լայն ծավալ և ստանում նաև գյուղատնտեսության մեջ: Յեվ այդ հասկանալի յե: Ստախանովյան շարժումը—այդ մասսաների շարժումն ե՝ տեխնիկայի առավելագույն ոգտագործման համար, աշխատանքի ամենաբարձր արտադրողականության համար: Ստախանովյականն այդ նա յե, ով յերկու-յերեք, նույնիսկ ավելի անդամ գերազատարում և սահմանված նորմաները: Յեվ արդյունաբերությունը, և՛ գյուղատնտեսությունը մեղ մոտ բավարար չափով հագեցված են տեխնիկայով և այդ տեխնիկայի լիակատար ոգտագործման պայմաններն ունենք մենք: Մեղ մոտ բանվորներն ու կոլտնտեսականներն աշխատում են վոչ թե շահագործողների համար, վոչ թե աղաների համար, այլ իրենց համար: Բանվորներն ու գյուղացիները լայն սպասման ապրանքներն ու մթերքներն արտադրում են վոչ թե շահագործի համար, այլ աշխատավորության պահանջների բավարարման համար: Նա, ով արդեն սովորել և ոգտագործել սոցիալիստական անտեսության առավելությունները, ով լիովին տիրապետել է տեխնիկային, նա աշխարհում չտեսնված արտադրողականություն և տալիս: Յեվ հենց դա յե ստախանովյականը:

Ստախանովյական շարժման մեջ ամենանշանակալիցն այն և, վոր ստախանովյականները առաջավորներ ու նախաձեռնողներ են: Նրանք սոցիալիստական աշխատանքի որինակներ են տալիս: Վաղը նրանց կհետեւն միլիոնները, Խորհրդային Միության բարը աշխատավորները և այն ժամանակ մեր յերկրում մթերքների առատությունն ել՝ ավելի կշատանա:

Ահա թե ինչու մենք մեծագույն ուշադրությամբ ու հոգատարությամբ պետք և մերաբերվենք դեպի յուրաքանչյուր ստախանովյականը և ողնենք բոլոր կոլտնտեսականներին՝ հասնել ստախանովյականներին:

Կոլտնտեսություններն արդեն իրենց ստախանովյականների հարցութավոր անուններ պիտեն արտադրության բոլոր ճյուղերում: Կասկած չկա, վոր գարնանացանի ընթացքում ևս յերեան

կդան նոր ստախանովյականներ: Պատի թերթը պարտավոր է դրել նրանց մասին, մասսայականացնել նրանց և ուրիշներին ել ողներ՝ հասնել ստախանովյականների արտադրողականությանը:

Ստախանովյականների շնորհական սոցիալիստական մրցությունը նոր ստորթմանի յե բարձրանում: Մրցմանը տոն են տալիս ստախանովյականները, այսինքն՝ սոցիալիստական աշխատանքի որինակներ տվող մարդիկ: Այժմ առանց աշխատանքի ստախանովյան մեթոդի պլանագանգեթի մրցությունն անիմաստ է: Այսուղի թերթն առավելագույն դործնականություն պիտի հանդես բերի: Յանքի հենց առաջին որը ամբողջ կոլտնտեսությունը պիտի իմանա, թե ո՞վ է իրեն ներկայացրել վորպես ստախանովյական: Վո՞ր արակտորիստը, վոր փոցխողը, վոր մաճկան և, վոր կրկնակի ու յեռակի արտադրանք և տվել: Ի՞նչ միջոցով, ինչպես և նա հասել դրան, ի՞նչպես կարող են նույն անել մյուս կոլտնտեսականները ես: Այս բոլորի մասին թերթը պետք է դրի ցանքի հենց սուաջին որը և շարունակի գրել ամեն որ:

Ըստ վորում, չպետք և մոռանալ, վոր ստախանովյան մեթոդն որդանապես իր մեջ և ամփոփում նաև աշխատանքի վորակը: Գյուղատնտեսության մեջ առանձնապես կարեոր և հաշվի առնել այդ հանգամանքը:

Ի հարկե, գյուղատնտեսության մեջ լավ աշխատանքի գըլիագոր արդյունքը կարելի յե վորոշել միայն տարվա վերջը, յերբ բերքը համարվում է: Միայն այդ ժամանակ կարելի յե ձչուրեն հաշվել ամբողջ աշխատանքի վերջնական արդյունքը: Այդ իմաստով ճիշտ է այն առածի իմաստը, թե՝ «Ճուտերն աշնաբ կհաշվեն»: Սակայն, գարնանացանի ընթացքում ևս կարելի յե գատել աշխատանքի քանակի ու վորակի մասին: Մենք գիտենք, թե ինչ պահանջներ կարելի յե առաջադրել ցանողներին, արակտորիստին, գոմապահին: Դրա համար ել կարող ենք իմաստը, թե ինչ և նշանակում աշխատել ստախանովյար և ինչ և նշանակում աշխատել վատ կամ միայն՝ բավարար:

Կոլտնտեսությունը պետք է ճանաչի իր ստախանովյականներին, այն մարդկանց, ովքեր ամենից լավ են աշխատում և վորոնք գրանով իսկ մեծ ոգուտ են տալիս և իրենց, և՛ կոլտնտեսությանը, և՛ ամբողջ խորհրդային յերկրին: Պատի թերթը դրոշի պես պիտի բարձրացնի նրանց, վորպեսդի նրանց որինակին հետեւն նաև մյուսները:

Ստախանովյան շարժումն որբատորե ավելի ու ավելի լայն մասսաներ է ընդգրկում : Միայնակ ստախանովականներից դեպի ստախանովյան ողակներ, բրիդաղներ ու կոլտնտեսություններ : Ստախանովյան միորյակներից դեպի ստախանովյան հնդորյակներ, տասնորյակներ, դեպի ստախանովյան գարում, դեպի ստախանովյան տարի : Ահա այսպես է լայնանում ու խորանում այս իսկական ժողովրդական շարժումը :

Այստեղից ել պարզ է, վոր այժմ պատի թերթերի խնդիրները վորոշ չափով բարեգացել են : Նրանք ավելի խոր կերպով պիտի մոտենան գործին : Կար ժամանակ, յերբ պատի թերթերն իրենց բոլանդակությունը սահմանափակում եյին պայքարելով լողորերի դեմ, աշխատանքից ուշացողների, կամ բոլորովին բացակայողների դեմ : Այժմ այդպիսի վիաստերն ավելի սակալ են : Կարող ե պատահել, վոր տվյալ կոլտնտեսությունում բոլորովին լողորեր չինեն : Մենք արդեն հարյուրավոր ու հաղարավոր կոլտնտեսություններ ունենք, վորտեղ ամբողջ տարվա ընթացքում աշխատանքի չգնալու վոչ մի դեպք չի յեղել : Սակայն նույնիսկ այն կոլտնտեսություններում, ուր դեռևս լողորության դեմ պայքարելն անհրաժեշտ է, պատի թերթը չի կարող միայն դրանով սահմանափակվել :

Այս տարի կառավարությունը մի շարք վորոշումներ է հրապարակել, վորոնք շատ մեծ դեր կիսաղան բերքատվության բարձրացման գործում : Մասնավորապես բարձրացված են ցորենի մթերման գները : ԽՍՀՄ ժողովրդին և Համ.Կ(ր)Կ կենտրոմի՝ «Ցորենի արտադրությունը խթանելու և ցորեն արտադրող կոլտնտեսությունների յեկամուտը բարձրացնելու մասին» վորոշման մեջ (1936 թ. 11 փետրվ.) ասված է .

1936 թվականի հունիսի 1-ից ցորենի մթերման գինը բարձրացնել ցենտներին 1 ռ. 20 կոպեկով :

Պետությանը հաց հանձնելու սահմանված պարտավորությունը կատարելուց հետո յել պետությանը հաց վաճառող կոլտնտեսություններն ու կոլտնտեսականները պետությանը վաճառած յուրաքանչյուր ցենտներ հացի դիմաց պարզե—հավելում են ստանում : Այդ պարզե—հավելումը կազմում է սահմանված դնի 10—100 տոկոսը : Նշանակում է, հացահատիկի հանձնման պարտավորությունը կատարելուց հետո կոլտնտեսությունը կամ կոլտնտեսականը վորքան ավելի ցորեն վաճառի պետությանը,

այնքան ավելի մեծ պարզե—հավելում կստանա : Անկասկած, այդ կրաքրացնի կոլտնտեսականների ու կոլտնտեսությունների շահագրգումածությունը՝ ցորենի բերքատվությունը բարձրացնելու գործում :

Պակաս նշանակություն չունի նաև կառավարության վորոշումը՝ սահմանված նորմայից ավելի հանձնված ճակնդեղի համար պարզե—հավելում տալու մասին : Վերջապես ԽՍՀՄ ժողովրդին և Համ.Կ(ր)Կ կենտրոմի փետրվարի 27-ի վորոշումը փոփոխում է հացի ու արևածաղկի հանձնման նորման՝ այդ նորման պակասեցնելու իմաստով : Այդ բոլոր վորոշումները խթան կանդիսանան կոլտնտեսությունների համար՝ բերքատվության բարձրացման գործում :

Պատի թերթերը պետք է առավելագույն չափով ոգտագործներ այս բարենպատ պայմանները, վոր ստեղծել են կառավարությունն ու կուսակցությունը և ամեն կերպ պրոպաղանդ մղեն հենց ցանքի ընթացքում բերքատվության բարձրացման ուղղությամբ պայքարելու համար :

ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԸ

Վերը մենք ասացինք, վոր այս տարվա ցանքի գլխավոր խնդիրն ե՝ բերքատվության բարձրացումը : Իր ինդիրը վատհացած կլինի այն պատի թերթը, վորը շարունակ ընդհանուր բառերով կլրկնի այդ լողունը : Ընդհանուր բառերի այլպիսի կրկնությունը վոչ մի ողուս չի տա : Խնդիրը պետք է հասկանալ իր բոլոր մանրամասնություններով և կոնկրետ իր կոլտնտեսության պայմաններն ուսումնասիրելով, այն ժամանակ պարզ կլինի, թե թերթն ինչպես պիտի պայքարի բերքատվության համար :

Բերքատվության բարձրացման հարցը քննենք զանազան կողմերից : Սկսենք ավելի ընդհանուրից :

Անցյալ տարի ամբողջ խորհրդային միության մեջ հացահատիկի միջին բերքատվությունը հեկտարին 10 ցենտներից չափավով : Միջին բերքատվությունը տատանվում եր հեկտարին 9-10 ցենտների միջև : Արդյոք բարձր ե այս բերքը : Վո՞չ : Ճիշտ է, այդ նախահեղափոխական Ռուսաստանի բերքից մի քիչ բարձր

և, սակայն, դգալի չափով ցածր և առաջավոր կապիտալիստական յերկրների բերքից :

Այդ միջինը : Խոկ յեթե վերցնենք յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության կամ շրջանի բերքատվությունը, ապա բոլորովին այլ պատկեր կտացվի : Մենք արդեն ունենք մի քանի կոլտնտեսություն, վորոնք հեկտարից մինչև 40 ցենտներ բերք են վերցրել : Մենք ունեք հարյուրավոր կոլտնտեսություններ, վորոնք հեկտարից 25—30 ցենտներ բերք են ստացել և հաղարավոր կոլտնտեսություններ, վորոնք հեկտարից 15—20 ցենտներ են ստացել :

Հեկտարից 40 ցենտներ բերքատվությունը համաշխարհային ռեկորդներից ել բարձր է : Սակայն սրանց կողքին մենք ունենք և կոլտնտեսություններ, վորոնք հեկտարից 4—6 ցենտներ բերք են ստացել, այսինքն՝ խարտառակության առաջան ցածր բերք : Ինչի՞ց ե առաջանում բերքատվության այսպիսի խիստ տարբերությունը : Կարելի յե կարծել, թե տարբերությունն առաջ ե գալիս նրանից, վոր հողն ամեն տեղ ել միատեսակ չի . տեղ կա՝ վատ հող ե, տեղ կա՝ լավ, և կլիման ել ամեն տեղ մինույնը չե : Իհարկե, և՝ հողը, և՝ կլիման քիչ նշանակություն չունեն բերքատվության մեջ : Այդ հաշվի յե առնում նաև մեր կուսակցությունը : ԽՍՀՄ ժողկոմիորհի և Համ. կ(բ) կ կենտկոմի 1936 թվի փետրվարի 10-ի վորոշման մեջ նշված և 1936 թվականի բերքատվության նորման, ըստ վորում, վորուչ յերկրամասերի և մարզերի համար նորմա յե սահմանված հեկտարից 12,9 ցենտներ, վորոշ մարզերի, յերկրամասերի համար ել՝ միայն 7,1 ցենտներ : Այդ այդպիս և : Սակայն, բերքատվության այն վիթխարի, համարյա տասնապատիկ տարբերությունը, վորի մասին մենք վերը խոսեցինք, առաջ ե գալիս վոչ կլիմայի և վոչ ել հողի պատճառով :

Վերցնենք միևնույն շրջանը, յենթագրենք՝ Սարատովի յերկրամասի ծախ ափը, կամ Ստալինգրադի յերկրամասը : Այս շրջաններն աչքի յեն ընկնում չորայնությամբ և բերքատվության աննպաստ պայմաններով : Այստեղ միշտ ել միջին բերքն ավելի պակաս ե յեղել, քան ուրիշ շատ շրջաններում : Զնայած դրան մենք այդ շրջաններում ունենք կոլտնտեսություններ, վորոնք հեկտարից մինչև 25 ցենտներ բերք են վերցնում և կոլտնտեսություններ, վորոնք միայն 5 ցենտներ են վերցնում : Յեկ այդ մի-

ժնույն տարին, միևնույն պայմաններում : Ինչո՞ւն ե բանը : Խնդիրն աշխատանքն ե և ուրիշ վոչինչ :

Այսպիսի հազարավոր որինակներ կարելի յե բերել և՛ հացատիկային կուլտուրաների բնագավառից, և՛ բամբակի, և՛ ձակնղեղի, մի խոսքով՝ բոլոր կուլտուրաների բնագավառից : Միթե մել հայտնի չեն 500-ականներ, վորոնք հեկտարից 500 և ավելի ցենտներ չափարի ճակնղեղ են տալիս և դրանց կողքին այնպիսի կոլտնտեսականներ, վորոնք հեկտարից մինչև 80 ցենտներ ճակնղեղ են տալիս : Միթե յերկրին հայտնի չեն ուղղեկական մի շարք կոլտնտեսություններ, վորոնք հեկտարից 60 ցենտներ դամբակ են ստացել, վորով համաշխարհային ուեկորդներն ել չեն զերազանցել և հենց նույն Ռւզբեկստանում կոլտնտեսություններ, վորոնք հեկտարից 6 ցենտներ, այսինքն՝ 10 անգամ պակաս դամբակ են ստացել :

Առաջալոր ու հետամնաց կոլտնտեսությունների բերքի այս հսկայական տարբերությունն առաջանում է միայն նրանից, վոր առաջալորները լավ են աշխատում, հմտութեն են ոգտագործում կոլտնտեսության առավելությունները, խոկ հետամնացները դեռ չեն սովորել աշխատել այնպես, ինչպես հարկավոր է :

Յեթե հաջողվեր հետ մնացող կոլտնտեսություններին միանդից առաջալորների շարքերը քաշել, ապա մեզ մոտ ամեն տեսակի մթերքների այնպիսի առատություն կստեղծվեր, վոր միանդամից մի քանի անգամ ավելի հարուստ կլինեյինք : Անկասկած, ժամանակի ընթացքում մենք կհամանենք գրան : Խոկ այժմ, այս տարի մենք պետք ե աշխատենք, վոր հետ մնացողները յեթե վոչ առաջալորների, գոնե միջակների շարքերը քաշեն, միջակները՝ առաջալորների, խոկ առաջալորները՝ շարունակեն ավելի առաջ գնալ :

ԽՍՀՄ ժողկոմիորհի և Համ. կ(բ)կ կենտկոմի փետրվարի 10-ի վորոշումը յուրաքանչյուր առանձին մարզի ու յերկրամասի համար բերքատվության առանձին նորմա յե սահմանում և այդ նորման անպայմանորեն պիտի կատարվի : Սակայն այդ նվազագույնն ե : Յուրաքանչյուր առանձին կոլտնտեսություն պետք է ձգտի ավելին ձեռք բերել :

Պատի թերթը նախորոք պետք ե իմանա, թե ավցալ շրջանում վո՞ր կոլտնտեսություններն են ամենաբարձր բերք տալիս և իր կոլտնտեսության մեջ ել պրոպագանդ մղի այդպիսի բերք ստու-

նալու համար : Պատի թերթը նախ և առաջ պետք է մանրամասն հաղորդի այդ բերքի մասին : Հետո պետք է ցույց տա, թե բարձր բերք ստացած կոլտնտեսության անդամներն ինչ շահ են ստացել դրանից : Լավ կլինի նույնիսկ այսպիսի մի աղյուսակ կազմել . բերքատվությունը մեր կոլտնտեսությունում և առաջավոր կոլտնտեսությունում , աշխորի արժեքը մեր կոլտնտեսությունում և առաջավոր կոլտնտեսությունում : Այնպես պիտի անել , վոր յուրաքանչյուր կոլտնտեսական , նույնիսկ ամենահետամնացը վոչ միայն իմանա , վոր կարելի յե ավելի մեծ բերք ստանալ , այլ և անմիջապես վոգերովի բարձր բերք ստանալու ցանկությամբ : Պատի թերթը շարունակ պետք է լուսաբանի առաջ տանող ճանապարհը և կոլտնտեսությանն ողնի՝ առաջ շարժվել այդ ուղիով :

Յեթե դուք արդեն պատմել եք ամենաստաջավոր կոլտնտեսության բերքի մասին , հարկավոր է մի հոդված կամ զրույց վերջնել ձեր կոլտնտեսության նախադահից՝ հետևյալ նյութի մասին . «Ինչու՞ մեզ մոտ բերքը ցածր ե» , կամ՝ «Մենք ինչպե՞ս համենք առաջավոր կոլտնտեսությանը» : Դեռ ցանքն սկսելուց առաջ հոդվածի առթիվ պետք է տեղավորել բրիգադիրների ու ակտիվ կոլտնտեսականների կարծիքները : Իսկ յերբ ցանքն սկսվի , պետք է թերթում լուսաբանել , թե ինչպես են իրագործվում բերքատվության բարձրացման ուղղությամբ արված առաջարկությունները :

Լավ կլինի նաև պատի թերթում տեղավորել հարեան առաջավոր կոլտնտեսության ղեկավարների հոդվածները , պատի թերթերի խմբկուների միացյալ նիստեր գումարել և բերքատվության բարձրացման համար մզվող պայքարի փորձի փոխանակում կատարել , գյուղթթակիցների ուժերով ցանքի վորակի ու նրա կատարման փոխադարձ ստուգում կազմակերպել : Դրանով պատի թերթը կծավալի սոցիալիստական մրցությունը՝ կոլտնտեսությունների միջև :

ՍԵՐՄԱՑՈՒՆ

Սակայն , բերքատվության բարձրացման հնարավորությունները լուսաբանելը և կոլտնտեսականներին բարձր բերք ստանալու վոգերություն ներշնչելը դեռ բոլորը չե : Հարկավոր է ան-

միջապես պայքար ծավալել , վորպեսզի իրականում կարելի լինի հասնել այդպիսի բերքի : Այս տարվա գարնանացանի ընթացքում սոցիալիստական մրցության մասին մենք կիսունք ստորև : Նախ հարկավոր ե քննել , թե գարնանացանի սահմաններում բարձր բերքի համար մզվող պայքարն ինչ մասերից ե բաղկացած : Պարզ ե , վոր այստեղ առաջին տեղն ե գրավում սերմացուն :

Ընդամենը մի քանի տարի առաջ կոլտնտեսություններում սերմացուն պակասում եր և ցանքից առաջ անհրաժեշտ եր լինում բառիս լայն իմաստով կլողգրամներով սերմացու ժողովել , առանց առանձնապես հոգալու այդ սերմացույի վորակի մասին , միայն թե՝ սերմացու լիներ : Այժմ խնդիրն այլ կերպ ե դրված : Մեզ հարկավոր ե վոչ թե պարզապես սերմացու , այլ՝ լավագույն , տեսակալոր սերմացու : Տեսակալոր ու հասարակ սերմացույի տարրերությունը պարզ ե բոլորին : Բավական ե ասել , վոր յերբեմն ամբողջ բերքը կախված է սերմացույի վորակից : Համենայն դեպքու տեսակալոր սերմացույով կարելի յե զգալի չափով բարձրացնել բերքատվությունը :

Մինչև զոկտեմբերյան մեծ սոցիալիստական հեղափոխությունը մեր յերկրում գուղատնտեսությունը հետամնաց եր : Գյուղացիները ցանում եյին միայն հասարակ , վատ սերմացու , ինչպես և պահում եյին վոչ թե ցեղական , այլ հասարակ , սակավ մթերատու անասուններ : Խորհրդային իշխանությունն աշխատում ե այնպես անել , վոր մեզ մոտ ամբողջ ցանքը կատարվի լավատեսակ , ընտիր սերմացույով , վորն ավելի համապատասխանում ե տվյալ վայրի պայմաններին : Խորհրդային կառավարությունը միջոցներ չի խնայում սերմացույի նոր տեսակներ ստեղծելու դորձի համար : Բազմաթիվ գիտական ինստիտուտներ ու հազարավոր գիտնական մասնագետներ մեր յերկրում զբաղված են սերմացուների սելեկցիայի վրա :

Մի քանի տարի առաջ՝ մեր կառավարությունն ակադեմիկոս Վալելովին մի ամբողջ եքսպերտիցիայով ուղարկեց յերկրագնդիս վրա յեղած բոլոր տեսակի ցորենների տեսակներից հավաքելու : Այդ եքսպերտիցիան ըրջեց համարյա ամբողջ յերկրագնդիս և այժմ մեզ մոտ՝ լենինգրադում մի քանի տասնյակ հազար տեսակի ցորենների կոլեկցիա ունենք , վորոնցից կարելի յե ստեղծել մեր յերկրի յուրաքանչյուր վայրին հարմար տեսակներ :

Ժամանակի ընթացքում մեզ մոտ կլինեն հացահատկային կուլտուրայի ամենալավ տեսակները:

Հալշանորեն ըսլորդ լած կլինեք ակադեմիկոս Տրոֆիմ Դենիսովիչ Լիսենկոյի անունը: Այդ մարդն ե, վոր հայտնագործել ե հացարույսերի յարովիզացիան: Նա մշակել ե մի նոր տեսություն, վորով կարելի յե յերկու տարում, նույնիսկ ամելի արագ ստանալ մեզ անհրաժեշտ կուլտուրայի ցանկացած տեսակը: Նա ինքն արդեն 2½ տարվա ընթացքում նույնայի մարդի համար ստացել ե գարնան ցորենի հիանալի տեսակ, վորը շատ վաղահատել: Այժմ նա ձեռնամուխ ե յեղել նոր տեսակներ ստանալու՝ 1½ տարվա ընթացքում: Լիսենկոն իսկական խորհրդային դիտնական ե, հեղափոխական, վոր դիտությունը նվաճել և կոլտընտեսությունների ու խորհանտեսությունների համար: Առաջ դիտնականները սերմի նոր տեսակ ելին ստեղծում 15 տարվա ընթացքում, և այն ել իրենք ել չդիտելին, թե 15 տարի հետո կստացվի՞ իրենց ուղած տեսակը, թե՝ կատացվի պետք յեղածին միայն մոտավորապես նման մի տեսակ: Մի հատիկից նրանք տարեկան միայն 10—15 հատիկ ելին ստանում: Իսկ Լիսենկոն մի տարում մեկ հատիկց արդեն ստանում է 8000 հատիկ: Ճիշտ և, այդպիսի բերք առայժմ կարելի յե պահանալ միայն փոքր ծավալով, լաբորատորային միջոցներով: Առայժմ կոլտնտեսային ու խորհանտեսային դաշտերում լայն ծավալով այլպիսի բերք ստանալ չե հաջողվի, սակայն կարենորն այդ չե: Կարենորն այն ե վոր Լիսենկոյի մեթոդի չնորհիվ 1½ տարվա ընթացքում արդեն կարելի յե ստեղծել սերմացույի անհրաժեշտ տեսակ, և այն ել հենց այն տեսակը, վորը տվյալ վայրում ավելի մեծ բերք ե տալիս:

Ակադեմիկոս Լիսենկոն համեմատաբար նոր ե սկսել սերմի նոր տեսակներ ստանալու գործով զբաղվել: Նրա մեթոդների ամբողջ ողուան ու արդյունավետությունը մեր կոլտնտեսությունները կզգան մի քանի տարուց հետո միայն, յերբ բավարար չափով բազմաթիվ նոր տեսակներ հանդես կդան: Սակայն, մենք սպասելու ժամանակ չունենք. չե կարելի բաց թողնել և վոչ մի տարի: Հարկավոր ե անմիջապես, հենց այս տարի, բոլոր միջոցները ձեռք առնել, վոր սոցիալիստական դաշտերում ցանվին լավագույն սերմեր: Ահա թե ինչու յուրաքանչյուր պատի թերթի եջերից չպետք ե զուրս մնա սերմացույի հարցը:

ԽՍՀՄ ժողկոմիորդի և Համ. Կ(բ)Կ Կենտկոմի «1936 թվի

կարնանացանի պետական պլանի մասին» վորոշման մեջ, վորի մասին արդեն վերը խոսեցինք, տեսակավոր սերմացույի մասին հետեւյալն ե ասված:

«1. Կոլտնտեսությունների համար գարնանացանի հացահատկային կուլտուրաների տեսակավոր ցանքի պլան հաստատել՝ 28 միլիոն հեկտար:

2. Պարտավորեցնել ԽՍՀՄ Հողժողկոմատին՝ այդ տարածությունը լիովին ապահովել բարձրորակ տեսակավոր սերմացույի:

ա) միջնորդունտեսային փոխանակման հաշվին՝ 9 միլիոն ցենտների չափով,

բ) հասարակ հացահատիկը «Զագոտղերնո»-յի պահեստներում յեղած տեսակավորի հետ փոխանակելով՝ 5 միլ. 610 հազար ցենտների չափով,

գ) Պետական տեսակավոր սերմացույի Փոնդից՝ 4 միլ. 40 հազար ցենտների չափով,

դ) Կոլտնտեսությունների սեփական տեսակավոր սերմացույի հաշվին՝ 16 միլ. 350 հազար ցենտների չափով»:

Այս վերջումից պատի թերթերը նախ և առաջ յերկու յեղացարություն պիտի անեն:

Առաջին.—կոլտնտեսությունները տեսակավոր սերմացույի դրամի մասը պիտի ստանան «Զագոտղերնո»-յի պահեստներից, Պետսերմի Փոնդից և ուրիշ կոլտնտեսություններից: Նշանակում ե՝ հարկավոր ե ժամանակին միջոցների դիմել և պետական պլանի համաձայն սերմացույի փոխանակություն կատարել: Մինչև ձյուն-հալն սկսելով, քանի զեռ ձանապարհները չեն ցեխացել, պետք ե սերմացուն փոխանակել, վորպեսզի հետո լծկաններին չտանջին ե ցանքը չուշանա: Անմիջապես պատի թերթում հարց գրեք, թե պատրաստ ե արդյոք, փոխանակված ե արդյոք սերմացուն: Այդ հարցի սխատեմատիկ լուսաբանումով պետք ե այնպես անել, վոր ժամանակին սերմացուն փոխանակվի: Հարկավոր ե քննադատել այս գործը ձգձգողներին, առաջ մղել գործը և չհանդստանալ, մինչև վոր անհրաժեշտ ամբողջ սերմացուն կոլտնտեսության շտեմարանում չլինի:

Պատի թերթի յերկրորդ յեղակացությունը հետեւյալն ե. Կոլտնտեսությունները տեսակավոր սերմացու պիտի ցանեն 28 միլիոն հեկտար, իսկ հացահատիկի ցանքերի ընդհանուր տարա-

ծությունը կոլանտեսություններում այս տարի լինելու յե 53,2 միլիոն հեկտար: Հետևապես՝ այս տարի տեսակավոր սերմը մեղ մոտ բավականացնում է ցանքի տարածության միայն կեսին: Մի մասն առայժմ ստիպված ենք հասարակ սերմացու ցանել: Սակայն հասարակից ել պիտի ընտրել ամենալավը, ամենից բարձր ծլունակություն ունեցողը:

Հետևապես, հարկավոր ե անմիջապես սերմացույի պատրաստության ստուգում կազմակերպել, այսինքն՝ ստուգել և այն սերմացուն, վոր չի փոխանակվելու, այդ արդեն կոլտնտեսություններն ունեն: Արդյոք դաշտա՞ծ ե այդ սերմացուն, ստուգա՞ծ ե արդյոք դրա ծլունակությունը: Նույնիսկ, յեթե այդ ամենը կարդին ե, այնուամենայնիվ այդ մասին պիտի մանրամասն դրել պատի թերթում: Յերկետ պիտի ունենալ այն, վոր դեռ ամեն ինչ արված չի, վոր ամեն ինչ ել ավելի լավ կարելի յե անել: Նշանակում ե՝ սերմացույի մասին պիտի դրել ու դրել:

Միայն պետության վրա հույս ընկելով՝ յուրաքանչյուր կոլտնտեսություն ու խորհտնտեսություն ինքը պետք ե հոգա իր տեսակալոր սերմացուն ավելի լավացնելու մասին: Յուրաքանչյուր կոլտնտեսություն ու խորհտնտեսություն իր հատուկ հողամասերը պիտի ունենա՝ տեսակավոր սերմացու աճեցնելու համար: ԽՍՀՄ ժողկոմիսորհի և Համ. Կ (Բ)Կ կենտկոմի՝ 1936 թվի գարնանացանին վերաբերյալ վորոշման մեջ այդ առթիվ հետևյալն ե ասված:

«Պարտավորեցնել դաշնակից ու ավտոնոմ հանրասպետություն ների ժողկոմիսորհներին և ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին, յերկրային գործկոմներին և յերկրային կոմիտեներին, մարզային գործկոմներին և մարզկոմներին, ԽՍՀՄ Հողժողկոմիսորհի և Համ. Կ (Բ)Կ կենտկոմի՝ 1936 թվի գարնանացանին վերաբերյալ ժողկոմատին՝ ապահովել յուրաքանչյուր կոլտնտեսությունում ու խորհտնտեսությունում հատուկ հողամասի առանձնացումը՝ հացահատիկի տեսակավոր ու բարելավված սերմացու ցանելու համար: Սահմանել, վոր սերմացույի համար առանձնացված հողամասերի չափը աշնանացան ցորենի և հաճարի համար պետք ե կազմի այդ կուլտուրաների ցանքի տակ դրված տարածության 12 տոկոսը, վարակինը և գարունը՝ 13 տոկոսը, գարնանացան ցորենինը՝ 15 տոկոսը:

Յուրաքանչյուր կուլտուրայի սերմնաբուծական հողամասերը

պետք ե առանձնացվեն՝ ցանքաշրջանառության դաշտերում և գարնանացանինը պիտի լիովին ցանվի աշնանավարի վրա»:

Աս շատ կարենոր միջոցառում ե, վորն արագորեն առաջ պիտի մղի սերմնաբուծական գործը կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում: Պատի թերթերը հատուկ հոկողության տակ պիտի առնեն այդ սերմնաբուծական հողամասերի ցանքը:

Ճատ կոլտնտեսություններում խրճիթ-լաբարատորիա կա: Պատի թերթը պիտի կարդի նրա հետ և տեղեկություններ տանը աշխատանքի մասին: Որինակ՝ ինչ արդյօնմք ե տվել սերմի ծլունակության ստուգումը: Վերջապես՝ սերմացույի ախտահանումը: Արդյոք ամեն ինչ նախապարաստված ե ախտահանման համար, կա՞ն արդյոք բավարար քանակությամբ գեղորայք: Մինչև այժմ մրիկը տարեկան մի քանի տասնյակ միլիոն փությաց ե խլում մեղանից: Առայժմ գիտությունը մրիկի գեմ պայքարելու ուրիշ միջոց չգիտե, բացի ախտահանումից: Ճիշտ ե, ակադեմիկոս Լիսենկոն արդեն աշխատում ե ցորենի այնպիսի տեսակ գտնել, վորը մրիկից չի վնասվի, յեթե նույնիսկ ախտահանված չլինի: Սակայն այդ դեռ ապագայի գործ ե: Իսկ առայժմ կոլտնտեսություններն այնպես պիտի անեն, վոր վոչ մի հասկ չփառնա մրիկից: Դրա համար հարկավոր ե ցանելուց առաջ ամբողջ սերմացուն ախտահանել: Իսկ դրա համար հենց այժմ պիտի նախարարաստվել, առանց ժամանակ կորցնելու:

Սերմացույի բարձր վորակի համար մղվող պայքարում պատի թերթի խորհուրդներն ապահովելու համար հարկավոր ե չոշափել նաև յարովիզացիայի հարցը: ԽՍՀՄ կենտգործկոմի 2-րդ նստաշրջանի վորոշման համաձայն այս գարնանը կոլտնտեսությունները 4 միլիարդ 900 հազար հեկտար պիտի ցանեն յարովիզացիայի յենթարկված սերմացու:

Թե ինչ ե յարովիզացիան, մենք այստեղ մանրամասն չենք բացատրի: Դրա մասին մի շարք մանր, բայց լավ գրքույկներ կան, վորոնց թվում նաև ակադեմիկոս Լիսենկոյի յարովիզացիայի հեղինակի գրքույկը: Կա նաև հրահանգ, թե ինչպես պիտի կատարել յարովիզացիան: Այստեղ մենք կնշենք միայն այդ արոձեռնարկման նշանակությունը և կասենք, թե պատի թերթերն ինչպես պիտի պայքարեն յարովիզացիայի համար, և ինչպես գրեն դրա մասին:

Յարովիզացիան, բույսի արագ հասումացումը նպաստում ե

ՑԱՏ-5)



մերքատվության բարձրացմանը։ Անցյալ առաջի յարովիկացիայի յենթարկված 2½ միլիոն հեկտար ցանքից յերկիրը 15 միլիոն փություղիչ հաց ստացավ։ Կարելի յեր և ավելին ստանալ, սակայն դժբախտությունն այն ե, վոր պեղ-տեղ յարովիկացիան սիսալ, վաս են կատարում, ուստի և նա անհրաժեշտ արդյունք չի տալիս։ Ի մի ամփոփելով 1935 թվի յարովիկացիայի արտադրանքները, մենք տեսնում ենք, վոր վորոշ կոլտնտեսություններ յարովիկացիայից հեկտարից 3—4, նույնուկ 6—7 ցենտներ ըերքի բարձրացում են ստացել, մյուսները՝ միայն մեկ կամ կես ցենտների ավելացում են ստացել։ Նույնիսկ կան կոլտնտեսություններ, վորոնք յարովիկացիայից վոչ մի ավելացում չեն ստացել։ Հետեւապես, կարեոր խնդիր ե՝ յարովիկացիան նիշտ կիրառել։

Բոլոր շրջանների ու բոլոր տեսակների համար յարովիկացիայի միանման մեթոդներ չկան։ Յուրաքանչյուր տեսակի սերմացու յուրահատուկ պայմաններ ե սպահանջում։ Ուրեմն ի՞նչ-պես վարիել։ Հարկավոր ե, վոր այն մարդիկ, վորոնց հանձնարարված ե յարովիկացիան, լավ իմանան իրենց գործը։ Այդ մի բարդ գործ չե, սակայն պետք ե իմանալ։ Ո՞վ պիտի յարովիկացիայով դրազվի ձեր կոլտնտեսությունում, բավարար չափով զիտե՞ն նա իր գործը։ Ահա, ամենից առաջ այս հարցը պետք է գնել պատի թերթում։

Այնուհետև, յարովիկացիայի համար համապատասխան շենք և վորոշ ինվենտար ե հարկավոր։ Հարթիչ, ցնցուղ, թիակներ, քամհարներ, ջերմաչափ ևայլն։ Այս ամենը պատրաստելը դժվար չե, սուկայն, յեթե վորեն մեկը պակաս լինի, յարովիկացիան կարող ե ձախողվել։ Հարկավոր ե այնպես անել, վոր այդ ագրոմիջոցառումն առավելացնելով արդյունքը տա։ Այդ առանձնապես կարելոր ե չորային շրջանների համար։ Թերթն այս գործի լուսարանում կարող ե այնպես անել, վոր յարովիկացիան լավագույն կերպով կատարվի, վորպեսզի կոլտնտեսությունը հազարավոր գիթերով ավելի հացահատիկ ստանա։

Մենք այս տարվա գարնանացանն ենք մտնում ունենալով ևս մի ուրիշ շատ կարելոր խնդիր, վորը, թեե ճիշտ ե, մեր յերկրի բոլոր կոլտնտեսություններին չի վերաբերում, սակայն շատ մեծ նշանակություն ունի։ 1935 թվի դեկտեմբերի 19-ին ԽՍՀՄ Ժողկում կարգը և Համկ(բ)կ կենտրոնը մի վորոշում ընդունե-

ցին՝ «կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման և վոչ սեահողային գոտու մարզերում, յերկրամասերում ու հանրապետություններում դյուզատնտեսության վերելքի մասին»։

Մինչեւ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը վոչ սեահողային գոտու վերաբերվում եյին միայն վորպես «սպառող» գոտու, վորտեղ դյուզատնտեսությունն արագ զարգանալ չի կարող։ Խորհրդային իշխանությունը գործով ապացուցեց, վոր այնպիսի մարզերում ևս, ինչպիսիք են Սոսկվայի, Լենինգրադի, Արևմտյան, Իվանովո-արդյունաբերական և այնպիսի յերկրներում, ինչպիսիք են Գորկու, Կիրովի, Կույբիչևի յերկրի ավել և Բելոռուսիան, գյուղատնտեսությունը կարող ե և պետք ե արագ զարգանա։ Դեռ ավելին. հենց այդ իսկ շրջաններում, կանոնավոր տնտեսություն վարելու դեպքում շատ ավելի բարձր բերք կարելի յե ստանալ։ Փաստ ե, վոր Սոսկվայի մարդում արդեն քիչ չեն այնպիսի կոլտնտեսություններ վորոնք հելտարից 25 ցենտներ և ավելի ցորենի բերք են ստացել։ Փաստ ե, վոր իվանովո-արդյունաբերական մարզում միջին հաշվով ամենա բարձր բերքն ե ստացվում ամբողջ ԽՍՀՄ-ում։ Ել չենք խոսում այն մասին, վոր վոչ սեահողային գոտու շրջանները վուշի գլուխ վոր մատակարարողներն են մեր թերթե արդյունաբերությանը և կարտոֆիլի ամենամեծ բերքն են տալիս։

Այնուամենայնիվ, այդ շրջաններում գյուղատնտեսությունը ավելի գանդապ ե զարգանում, քան անհրաժեշտ ե։ Շատ կոլտընտեսություններ հետ են մնում և վաս են կազմակերպված։ Կառավարությունը մի շարք կարեվորագույն միջոցառումներ ե մըշակել այդ շրջանների կոլտնտեսությունների ամրապնդման համար։ Այս տարի այդ շրջաններում կազմակերպվելու յե 266 նոր մեքենա-արակտորային կայաններ։ Այդտեղ են ուղարկվում մեծ թվով տրակտորներ և այլ գյուղատնտեսական մեքենաներ։ Նախատեսված ե այս տարի բացել, ճահիճներից ազատել և ցանքի համար նախապատրաստել 700 հազար հեկտար տարածություն եալին։

Այդ շրջանների կոլտնտեսային պատի թերթերը պետք ե պրոպագանդ մղեն ԽՍՀՄ ժողկոմիսորհի և Համկ(բ)կ կենտրոնի այդ վորոշման կետ առ կետ իրադրժման համար։ Պետք ե պարբերաբար ստուգել, թե տվյալ կոլտնտեսությունում ինչ-

աես և իրագործվում այդ վորոշումը և ինչ պիտի անել հենց այժմ՝ ցանք անքից առաջ և ցանքի ընթացքում։

Այդ վորոշման մեջ կան մի շարք ցուցումներ, վորոնք կարող են վերաբերել նաև այլ շրջանների կոլտնտեսություններին։ Դրանք են՝ կոլտնտեսային կյանքի ստալինյան կանոնադրությունը խստաբեն կիրառելու, կանանց ղեկավար աշխատանքների առաջ քաշելու և այլ ցուցումները։

ԹԱԳՆՎԱԾ ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՑԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մենք արդեն առացինք, վոր Հաճախ իրար հարեան յերկու կոլտնտեսություններ, միևնույն շրջանում, տարբեր բերք են ատանում և այն ել այնքան տարբեր, վոր մեկի բերքը մի քանի անգամ գերազանցում է մյուսին։ Հետ մնացող կոլտնտեսությունում ևս բարձր բերք ստանալու բոլոր հնարավորությունները կան, սակայն այդ հնարավորությունները մնում են անողուագործելի։ Նշանակում ե, Հարկավոր ե յերեան հանել ու գործի դնել այդ թաղնված հնարավորությունները։ Այդ թաղնված հնարավորությունները յերբեմն մանրունքների մեջ են, վորոնք բոլորին տեսանելի ու հայտնի յեն։

Հին գյուղի անկուլտուրականությունն ստեղծել ե «յաքախտ» արտահայտությունը, վոր արտահայտում և անտարբերությունը՝ ճշգրտության, կանոնավորության, վստահության նկատմամբ, մի բան, առանց վորի մտածել անգամ չի կարելի տնտեսության կուլտուրայի և ընդհանրապես կուլտուրայի մասին։ Յենթաղրենք, թե կոլտնտեսությունը չի ստուգել սերմացվի վորակը—«յաքախտ, եսպես ել յոլա կդնանք» ասելով։ Յենթաղրենք, թե չի ախտահանել սերմացում՝ «յաքախտ, եսպես ել յոլա կդնանք» ասելով։ «մեր պատերն,—ասում են, —ցանել են առանց ախտահանելու»։ Կամ, որինակ՝ ծանծաղ են հերկում, մատ են փոցինում, ցանքը մի քանի որով ել իզուր տեղը ձգձգում են «յոլա կերթա, չի փախչի» ասելով։ Իսկ այս բոլորի հետեւանքով, անպայման վատ բերք կստացվի։ Յեկ հետո՝ կոլտնտեսականները կզարմանան։ Ես ինչպես յեղալի։ Հողը միևնույն ե, յերկինքը՝ նույնպես, վարել ենք, ցանել, փոցինել այնպես, ինչպես բոլորը, իսկ բերքը՝ պակաս յեղավ։ Սակայն, ինդիրն

ել այն ե, վոր աշխատել են վոչ այնպես, ինչպես բոլորը, այլ շատ ավելի վատ։

Յերբ մենք խոսուամ ենք թագնված հնարավորությունների ողտագործման մասին, ամենից առաջ նկատի ունենք պայքարը հենց այդ «յոլա գնալու» դեմ։

Գարնանացանը պիտի նախապատրաստել ու կատարել այնպես, վոր ամեն ինչ արված լինի լավագույն ձեռվ, վոր ողտագործված լինեն բոլոր հնարավորությունները, այն ժամանակ բերքն ել ամենաբարձրը կլինի։ Յեկ ահա, պատի թերթը, ընդհանուր ու մակերեսային դատողություններով չբավարարվելով՝ պետք ե մանրացնի խնդիրը՝ բաժանելով մի շարք հարցերի, վորպեսզի նրանցից յուրաքանչյուրը կատարվի լավագույն ձեռվ։ Դժվար չե գրել, թե՝ Պետրոս Փոթոյանը լողը ե, աշխատանքի չե գուրս գալիս։ Բայց, որինակ, յեթե այդ Փոթոյանին հանձնարարված ե լծասարքը նախապատրաստել և նա իր գործը վատ ե կատարել, յեթե հենց վարի առաջին որերին սամին ե կոտրել, կամ սամաթելը կտրվել, ահա դրա մասին դրելն ավելի դժվար ե, վորովհետեւ պետք ե լավ իմանալ գործի գործինը։ Բայց, հենց այդպես պիտի գրել թերթում։ Հարկավոր ե մերկացնել վատ աշխատանքը և ցույց տալ ցանքի ու նրա նախապատրաստության բոլոր հնարավորությունները։

Մենք պատի թերթերի խմբագիրներից չենք պահանջում, վոր նրանք անձամբ ամեն տեղ զնան ու ամեն բան իմանան։ Վո՞չ։ Նրանք պետք ե միայն համարանան պատի թերթի խնդիրները և կարողանան մարդկանց թերթի աշխատանքի մեջ գրավել, այն ժամանակ, իբրոք վոր թերթը կդատանա ամենազետ և զորել։

Մենք մի քանի տասնյակ կոլտնտեսային պատի թերթ ենք նայել։ Նրանց հիմնական թերությունն ե—ընդհանուր դատողությունները, վոչ կոնկրետությունը, ոպերատիվության բացակայությունը։ Յեթե թերթը վատի մասին ե գրում, ապա ամեն ինչ այնքան վատ ե գուրս բերում, վոր կարծես ազատվելու ճարչկա, կարծես համատարած այլանդակություն ե տիրում։ Յեթե լավի մասին ե գրում, ապա ստացվում ե, վոր ամեն ինչ այնքան հիմնալի յե, վոր մնում ե միայն վարդերը հոտոտել։ Մինչդեռ թերթի խնդիրը հենց այն ե, վոր լավից պահանջի ավելի ևս լավանալ, իսկ վատին ողնի, վոր նա ել լավանա։

Այդ թերթերից վերցնենք ամենաբոլակալիցը—«կենին-

յան հաղթանակ» կոլտնտեսության «Սոցիալիզմի ուղին» թերթը։ Այդ թերթը գեռես անցյալ տարվա դեկտեմբերին սկսել է գրել դարնանացանի նախապարաստության մասին։ Դրա համար նըան պետք է գովել։ Այսուհետեւ, թերթը համարձակորեն քննադատում և վարչության թերությունները և այդ ևս գովելի յե։ Սակայն, ահա թե նա ինչ է գրում իր № 18-ի առաջնորդողում։

«Կոլտնտեսությունն ունի իր դարբինները, խարազները, վորոնց պետք և անմիջապես լծել կոլտնտեսության գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների վերանորոգման գործին։ Առանձնապես ուշադրություն պիտի դարձնել լծկանների գրության վրա։ Զիերը նիհար են և յեթե այդպես շարունակվի, ապա չի կարելի ասել, թե մենք լիովին պատրաստ ենք դարնանացանին»։

Թվում ե, թե վատ չի գրված։ Թերթն ահազանգում և թերությունների մասին և այդ պատիվ և բերում իրեն։ Սակայն նա սահմանափակվում է միայն ընդհանուր ֆրազներով։ Այժմ այդ բանի պետք չե։ Յեթե թերթը տեսնում է, վոր ձիերը նիհար են, պետք և յերեան հանի դրա պատճառները։ Ո՞վ ե մեղավոր։ Ինչո՞ւ վատ են պահվում ձիերը։ Թերթը գիտում է ուղղակի վարչությանը, թե՝ ուշադրություն դարձրեք։ Իհարկե, գլխավոր պատասխանատուն վարչությունն ե։ Սակայն վարչությանը գիտելիս պետք և նշել նաև կոնկրետ միջոցառումներ։ Չենք կամկածում, վոր այդ կոլտնտեսության ձիազանների մեջ կան մարդիկ, վորոնք ցանկանում են, վոր ձիերը լավ պահպան։ Մինեն։ Այդ մարդիկ գիտեն ձիերի վատ վիճակի խական պատճառոր։ Հարկավոր և նրանց հարցնել, իմանալ այդ պատճառները։ Յեկ այդ գեղլքում թերթը կարող է կոնկրետ դիերի հարցը, հասնել դրական արդյունքների։ Ահա թե այժմ ինչպես պիտի պայքարել թերությունների դեմ, պայքարել թափնականարարությունների ոգտագործման համար։

Վերցնենք մի ուրիշ թերթ—Վորոնեժի մարզի Վորոշիլովի անվան կոլտնտեսության բրիգադային թերթը։ Այդ թերթին նայելով, կարծես ամեն ինչ այնպիս է, վոր պիտի լավ ել լինել չի կարող։ Յեկ սերմացուն և պատրաստ, և՛ ձիերն են հիանալի վիճակում, և ընդհանրապես ամեն ինչ լավ է կոլտնտեսությունում։ Սակայն, գերախտաբար, թերթը վոչինչ չի գրում այն մասին, թե ինչ վորակի յե սերմացուն, վորքան և նրա ծլունակությու-

նը, ինչ գրության մեջ ե լծասարքը։ ԶԵ՞ վոր նույնիսկ լավ ձիեր ունենալու գեպքում գործը կարող է տաղալիւել, յեթե լծասարքը կարգին չե։ Բայց, ընդունենք, թե այդ բրիգադի և՛ սերմացուն և լավը, և՛ լծասարքն է կանոնավոր։ Այդ գեպքում, համենայն գեպս, պետք և սուսպում կատարել և պարզել, թե ինչը կարելի յե ավելի լավ անել։ Որինակ՝ գոմազըն ինչպիս է գաշտ փոխադրում, կամ ճակնդեղի վաշտերի հանգային պարաբունյութին։

Հայտնի յե, վոր մեզ մտա սովորաբար գոմազըն վատ և պահպատում, գաշտ և փոխադրվում վոչ իր ժամանակին և շաղ և տըրպում վոչ այնպես, ինչպես հարկավոր է, վորի պատճառով եւ նրա արդյունքը կիսով չափ նվազում է։ Նշանակում է՝ նույնիսկ առաջավոր կոլտնտեսություններում դեռ վաղաժամ և հանգըստանալ և գրել, թե ամեն ինչ լավ գիտակում է։ Ամենուրեք գեռելու բարձրացման թագնված հնարավորություններ կան։ Մենք պետք և գեռ շատ ու շատ պայքարենք խկական կուտուրական տնտեսություն ստեղծելու համար։

Այժմ վերցնենք ցանքի ժամկետների հարցը։ Հայտնի յե, վոր ցանքի ժամկետները միշտ ել, և մանափանդ գարնանը, առաջնակարգ նշանակություն ունեն։ Փորձով ապացուցված և ստուգված է, վոր ցանքը մեկ-յերկու որով ուշացնելը խիստ նվազեցնում է բերքը։ Յեւ յեթե մենք ցանկանում ենք առավելագույն բերք ստանալ, պարզ է, վոր պետք և ապահովենք ցանքն ամենակարճ և ամենանպատավոր ժամկետներում կատարելը։

Կարելի յե մտածել, թե ցանքի ժամկետների մասին պատի թերթում կարելի յե զրել միայն հենց ցանքի ժամանակ։ Սակայն այդպիսի գատողությունը բոլորովին սիամ է։ Հենց ցանքից առաջ է, վոր պիտի մտածել ժամկետների մասին։ Ցանքն սկսվելուց հետո դրա մասին մտածելն այլևս ուշ կլինի։ Նույնիսկ, առանց սիսարկելու, կարելի յե ասել, վոր ցանքի ավարտումը կարճ ժամանակում, լիովին կախված է նախնական նախապատրաստությունից։ Ժամկետները հենց հիմացանքից առաջ են վորոշվում։ Ցանքն արագ կատարելու համար հարկավոր և ամեն ինչ նախատեսել, մինչեւ վերջին մանրունքները, վորպետքի ցանքի որերին վոչ մի գգգում չլինի։

ԽՍՀՄ ժողովարկության և Համկ(ր)կ կենտրոնի վորոշումը պարնան ցանքի ծառորոշ ժամկետներ և սահմանում—յերկրամա-

սերի, մարդերի, հանրապետությունների մի մասի համար 7—10 աշխատանքային որ, մյուս մասի համար՝ 10—12 որ։ Իսկ բամբակի ցանքը ջրովիր շրջաններում պիտի կատարվի 8—12 որում, անջրդի վայրերում՝ 6—8 որում։ Վուշի ցանքը՝ 5—7 որում, ճակնդեղինը՝ 10—12 որում և արևածաղկինը՝ 5—7 որում, ըստ վրում, տեխնիկական կուլտուրաները պիտի ցանվեն վոչ վերջին հերթին, ինչպես հաճախ արյուսմ եր անցյալում, այլ տիյալ կուլտուրայի համար ամենալավ ժամկետին, առանց հերթականություն պահպանելու։

Այս տարի կառավարությունն ու կուսակցությունն արդեկել են վաղ ցանքը և սավառնակից կատարվող ցանքը, վորը չի ապահովում ցանքի բարձր վորակը։

Յանքի սկզբան նախորոք ճշտորեն վորոշել հնարակոր չե։ Այդ կախված ե յեղանակից և տվյալ վայրի դիրքից։ Սակայն մի բան լավ պիտի հիշել—ժամանակը հասնելուն պես չփորչնել և վոչ մի ժամ։ Այն ել հիշեցնենք, վոր ամբողջ կոլտնտեսության, կամ հենց ամբողջ բրիգադի համար ցանքի մելոդից միանգամից չի դալիս։ Հայտնի յե, վոր արևահայաց հողերն ավելի շուտ են չօրանում, քան իտու և ստվերու հողերը։ Եշանակում ե՝ պետք ե ոգտագործել առաջին իսկ հնարակորությունը և ակսել ցանքն առանց ձղձղելու։

Սակայն անհրաժեշտ ե զգուշացնել նաև մյուս ծայրահեղությունից։ Խիստ վաղ չսկսել ցանքը։ Այդ վտանգն առանձնապես զգացվում է հարավում, վորտեղ ձյուն քիչ և լինում։ Հողը կարծես թե ցամաքել ե և կարելի յե ցանել, սակայն կարող են սառնամանիքներ լինել։ Որինակ՝ այս տարի Դրիմում ուղում եյին ցանք անել դեռ հունվարի վերջերին։ Բայց դեռ գործը չսկսած՝ բուքն ու սառնամանիքն ակսվեց։ Յեթե ցանած լինելին, այդ ցանքն ամբողջապես պիտի փշանար։

Հունվարին ցանելն ուղղակի հիմարություն ե։ Սակայն այդ անմտությունը վոչ չ ամեն անգամ և վոչ բոլորն են տեսնում։ Ահա, որինակ, անցյալ տարի Հյուսիսային կովկասում և Ազով-Սևծովյան մարզում յեղիպատացորենն ու կորեկը ցանեցին մայիսի սկզբին և ապրիլին, յերբ յեղանակը թեև արդեն տաքացել եր, սակայն հողը դեռևս պահանջվող ջերմությունը չուներ։ Դրա հետեանքը յեղավ այն, վոր ցանքի մի մասը բոլորովին փչացավ։ Կառավարությունը տեղական կաղմանկերպություններին հատկա-

պես նախազգուշացնում ե, վոր պետք ե խուսափել ավելորդ շտապողականությունից և նշում ե, վոր «անթույլատրելի» յե 1935թվին տեղի ունեցած չափազանց շտապողականության կրկնությունը, յերբ յեղիպատացորենը, կանեմիը ցանվեցին խիստ վաղ, և յեղիպատացորենը՝ չտաքացած հողում։

Յեթե ցանքի ժամկետի հարցն այսքան կարեւոր ու լուրջ ե, ապա պարզ ե, վոր պատի թերթը պետք ե իր ժամանակին հարուցի ու լուսաբանի այդ հարցը։ Անցյալ տարիները շատ կուտնատեսություններ հատուկ հոկտեմբեր հոկտեմբերը ուղարկում, վորոնք ստուգում եյին, թե հողը վորատեղ ե ցանքքել։ Չեր խանդարի ամենուրեք այդպիսի հոկտեմբեր ունենալ։ Սակայն գլխավոր խընդիրն ե՝ նկատի ունենալ, վոր ցանքի արագությունը կախված ե նրա լավ նախապատրաստությունից։ Միայն այն գեղջում, յերբ կոլտնտեսությունն ու նրա յուրաքանչյուր բրիգադը պատրաստ կլինի ամեն բոլիք ցանքի դուրս դալու, միայն դեպքում, յեթե նախորոք բոլոր խոչընդուները վերացված կլինին, կարելի կլինի խսկապես նպաստավոր ժամկետներին կատարել ցանքը։ Պատի թերթն իր գլխավոր ուշադրությունը պետք ե դարձնի ցանքի նախապատրաստության վրա։

Հաղարակոր գյուղթղթակիցներ արդեն մկսել են ստուգել, թե իրենց կոլտնտեսությունը վորքան ել պատրաստ ցանքին։ Համարյա ամենուրեք ռեյլեր են կազմակերպվում։ Այդ ռեյլերի ընթացքում գյուղթղթակիցներն ստուգում են սերմացույի վորակըն ու պահպանումը, ստուգում են նրանց ծլունակությունը, ստուգում են տրակտորների և մյուս գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման ընթացքը, դարբնոցների աշխատանքը, գոմալըի հավաքումը, ձիերի խնամքը, ագրոսեխնիկական ուսուցման վիճակը և այլն։

Հասկանալի յե, վոր առանց րուգի կորցնելու, այդ ռեյլերի նյութերը պետք ե տեղավորել թերթում։ Սակայն, վոչ միայն տեղավորել, այլ նաև միջոցներ ձեռք առնել թերթությունների վերացման համար։ Ահա, որինակ, անցյալ տարի վորոնեժի մարդիկ «վերնի պուտ» կոլտնտեսության գյուղթղթակիցներն ինչպես վարվեցին։ Նրանք հայտաբերեցին, վոր սերմացուն շատ ցածր ծլունակություն ունին։ Այդ մասին թերթում տպեցին և միաժամանակ նույն որը լավագույն ակտիվիտաներն ու բրիգադիրները սերմացուն տարան փոխանակելու։ Նույն գյուղթղթակից-

Ները պարզեցին, վոր դարբնոցները չեն աշխատում՝ ածուխը ժամանակին սատագմած չլինելու պատճառով։ Նույն որը խնդիր դրին և սայլ ուղարկեցին ածուխ թերելու։

Յուրաքանչյուր կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթ կարող է և պետք է կազմակերպի այսպիսի ույյու։

ԱԳՐՈՆՈՄԸ, ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ ՅԵՎ ՊԱՏԻ ԹԵՐԹԸ

Հազիվ թե կարիք լինի խոսել այն ոգուտի մասին, վոր ագրոնոմը տալիս է կոլտնտեսությանը։ Նախահեղափոխական գյուղուամբն եր, վոր ագրոնոմին, ինչպես ասում են, վիճակվում եր հակատը պատին խփել և հոկայական դժվարություններով ամենահասարակ ադրումիջոցառումների հասնել։ Հաճախ դյուզացին ուշադիր լսում եր նրան, համաձայնվում նրա ասածներին, սակայն շարունակում եր իր հին, պապենական ձևով տնտեսություն վարել։ Դժվար, նույնիսկ անհնարին եր ագրոնամիսն լայնորեն կիրառել մանր, տնայնագործական դյուզացիական տնտեսության մեջ, վորը դաժան շահագործման եր յենթարկվում։

Ուրիշ բան է կոլտնտեսությունը։ Հենց ինքը՝ կոլտնտեսության կառուցվածքն այնպիսին է, վոր գիտական մոտեցում է պահանջում և դրա չնորհիվ կարող է վիթխարի արտադրողականություն տալ։ Իրավացիորեն ագրոնոմը կոլտնտեսության մեջ պետք է պատվավոր տեղ գրամի և նրա գերն ու մասնակցությունն արտադրության մեջ ամեն կերպ պիտի բարձրանա։

Սակայն խոսենք անկեղծորեն։ Այդպիս է արդյոք ագրոնոմի դրությունը բոլոր կոլտնտեսություններում։ Վո՛չ։ Կոլտնտեսային պատի թերթերը սերուորե՞ն են կապված ագրոնոմի հետ։ Այս հարցին ևս ստիպված ենք առայժմ բացասական պատասխան տալ։ Յեկ այդ կոլտնտեսային պատի թերթերի խոսքը մենք խոսություն կարող ենք կանոնական պարզ արդեն մենք ունենք կոլտնտեսություններ, վորոնք այդ ուղին են բոնել։ Սակայն քիչ չեն և այնպիսի կոլտնտեսություններ, վորոնք դեռ նույնիսկ ագրոնոմին մեջ չեն հանդիսանում և հերկն անել։ Որինակ՝ ագրուտեխնիկան պահանջում է հերկն անել վորոշ խորությամբ, բայց ամեն տեղ այդ կանոնը չեն պահպանում։ Ագրուտեխնիկան պահանջում է շարքացան անել, կամ գիսեալոր ցանիչներով ցանել, բայց վորոշ կոլտնտեսություններում ցանիչները սրահի տակ կանգնած են մնում և ցանքը կատարվում է ձեռքով։ Ագրուտեխնիկան պահանջում է հողը կանոնավոր աղբել, բայց վորոշ կոլտնտեսություններ ուղղակի վիշացնում են զոմազբը։ Ագրուտեխնիկան պահանջում է վորոշակի ցանքաշրջանառություն և խոտացանություն, բայց մի՞թե հայտնի չե, վոր հաճախ ցանքաշրջանառությունը խախտվում է։

Թերթը պետք է աղբոնոմին ոգտագործի բառիս ամենալայն իմաստով և այն ել վոչ միայն վորպես մշտական հեղինակ։ Կոլտնտեսային թերթը պետք է շարունակ պայքար մղի տնտեսությունը գիտականորեն վարելու համար։ Իսկ այդ գործում նրան ո՞վ ավելի լավ կողնի, քան աղբոնոմը։ Յեկ թերթը շարունակ պիտի պրոպանդ մղի աղբոնոմի համար։ «Ագրոնոմն այսինչ բանն է խորհուրդ տալիս»—

այսպիսի հոգվածներն անպակաս պիտի լինեն թերթի եջերեցի ինչպես գագնանացանի նախապատրաստության ընթացքում, այսպես ել հենց ցանքի ժամանակ։

Ագրուտեխնիկայի հարցը շատ մեծ հարց է։ Այդ ևս վերաբերում է կոլտնտեսությունների չոգտադործած հարավորություններին։ Կան կանոններ ու միջոցառումներ, վորոնք վաղուց արդեն մշակել ե աղբուտեխնիկական գիտությունը։ Այդ միջոցառումները կարող են ապահովել բերքատվության զգալի բարձրացումը, սակայն, դժբախտաբար դեռ վո՛չ ամեն տեղ են կատարվում այդ միջոցառումները։ Յեկ այդ այլիս հանդուրժել չի կարելի։ Յեթե մենատնտեսության գաղմաթիվ պատճառներով չեր կարող ողտվել գիտության բարիքներից, ապա կուտնտեսությունն այդպիսի պատճառներ չունի։ Կոլտնտեսությունը կարող է պետք ողտագործի գիտությունը մինչև վերջ։

Իր ժամանակին, դեռ կոլեկտիվացումից առաջ մենք շատ ելինք գրում ու խոսում աղբոնմինիմումի մասին, այսինքն՝ այն աղբուտեխնիկական պարզ միջոցառումների մասին, վորոնք Խորհրդացին իշխանության պայմաններում նույնիսկ անհատական գյուղացիական տնտեսություններում կարելի յեր իրագործել։ Այժմ մենք կոլտնտեսություններում արգեն կարող ենք խոսել վոչ թե աղբոնմինիմումի, այլ աղբոնմաքսիմումի մասին, այսինքն՝ ամենանարարդ ու ամենալուրջ աղբոնմիջոցառումների կիրառման մասին։ Յեկ արդեն մենք ունենք կոլտնտեսություններ, վորոնք այդ ուղին են բոնել։ Սակայն քիչ չեն և այնպիսի կուտնտեսություններ, վորոնք դեռ նույնիսկ աղբոնմինիմումին ել չեն հանդիսանում և հերկն անել։ Որինակ՝ աղբուտեխնիկան պահանջում է հերկն անել վորոշ խորությամբ, բայց ամեն տեղ այդ կանոնը չեն պահպանում։ Ագրուտեխնիկան պահանջում է շարքացան անել, կամ գիսեալոր ցանիչներով ցանել, բայց վորոշ կոլտնտեսություններում ցանիչները սրահի տակ կանգնած են մնում և ցանքը կատարվում է ձեռքով։ Ագրուտեխնիկան պահանջում է հողը կանոնավոր աղբել, բայց վորոշ կոլտնտեսություններ ուղղակի վիշացնում են զոմազբը։ Ագրուտեխնիկան պահանջում է վորոշակի ցանքաշրջանառություն և խոտացանություն, բայց մի՞թե հայտնի չե, վոր հաճախ ցանքաշրջանառությունը խախտվում է։

Այս բոլորն անկուլտուրականության մնացորդներն են, վորոնց դեմ շատ ավելի համաձակորեն պիտի պայքարել։ Յեկ ել

ո՞վ, յեթե վոչ թերթը պիտի լինի այդ պայքարի նախաձեռնողն ու տրիբունը:

Եեթե վերցնենք կոլտնտեսային տնտեսությունն իր ամբողջությամբ, ազրոտեխնիկան շատ ու շատ առաջ է գնացել: Քանի՞ քանի մարդ և սովորում մեղ մոտ, քանի՞-քանիսն են ավարտել կուրսերը, ազրոնոմիական գիտությունների վորքա՞ն իսկական ևնտուղիաստներ են հանդես յեկել կոլտնտեսություններում: Տեղ-տեղ նրանք նույնիսկ ազրոնոմներին են դործի մղում, նրանց ա-ռաջ նոր ուղիներ ու խնդիրներ են բացում: Հենց միայն այն փաստը, վոր այժմ մենք մի քանի անդամ ավելի գյուղատնտե-սական մեջենաներ ունենք, քան նախապատերագրման շրջանում, բավական պերճախոս կերպով ցույց ե տալիս, թե ինչպիսի նվա-ճումներ ենք ունեցել ազրոտեխնիկայի բնագավառում: Սակայն թաղյնելու հարկ չկա. մեղ մոտ դեռևս կա նաև բավական հե-տառնացություն ու անկուտուրականություն:

Գարնանացանն այն ժամանակամիջոցն է, յերբ պատի թեր-թը շատ բան կարող է անել ազրոտեխնիկան կոլտնտեսային ար-տադրության մեջ զարգացնելու ուղղությամբ: Վերցնենք հենց մեկ որինակ—ցանքաշրջանառությունը: Ի՞նչ գրության մեջ է ձեր կոլտնտեսության ցանքաշրջանառությունը: Հարկավոր է, վոր այդ իմանան վոչ միայն ազրոնոմն ու կոլտնտեսության վարչությունը, այլև յուրաքանչյուր կոլտնտեսական: Իսկ յեթե ցանքաշրջանառությունը խախտվում է, ապա առավել ևս պիտի գրել դրա մասին: Պետք է բացատրել, թե ճիշտ ցանքաշրջանա-ռությունն ինչ ոգում է տալիս և ինչ վնաս է ստացվում նրա խախտումից:

Պատի թերթերն իր ժամանակին ճիշտ եյին վարլում, յերբ աշխատում եյին այնպես անել, վոր յուրաքանչյուր կոլտնտեսա-կան գիտենա, թե ցանքի ժամանակ ինքն ինչ պիտի անի և յու-րաքանչյուրը կանգնած լինի իր տեղում: Այդ կարևոր է և այժմ: Սակայն այդ քիչ է: Յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է հետաքրքրվի կոլտնտեսության ընդհանուր դրությամբ և ի-մանա այդ դրությունը: Այն ժամանակ ամեն ինչ ավելի լավ կարվի: Կոլտնտեսականը տեր և իր կոլտնտեսության մեջ: Ել-ուրեմն, ինչպես կարող է տերը չհետաքրքրվել այնպիսի մի կա-րեռ հարցով, ինչպիսին է ցանքաշրջանառությունը: Յեվ յեթե

բոլորը դրա մասին իմանան, ապա ցանքաշրջանառությունը խախ-տելն ել դժվար կլինի:

Սակայն, ցանքաշրջանառությունը մենք որինակի համար վերցրինք: Զբուցեցեք ձեր ազրոնոմի հետ և նա ձեղ մանրամասն կասի, թե այս տարի ինչ ազրոճեռարկումներ պիտի կիրապվեն-ձեր կոլտնտեսությունում: Այն ժամանակ դուք կիմանաք, թե թերթում ինչի մասին և ինչպես պիտի գրել:

Ազրոտեխնիկայի կենտրոնը կոլտնտեսությունում լրձիթ-լաբորատորիան է: Այդ հիանալի գործն իմաստ ունի միայն կոլ-տնտեսություններում: Արդեն կան այնպիսի խրճիթ-լաբորատո-րիաներ, վորոնք իրոք գիտական հիմնարկություններ են գար-ձել: Նրանք վոչ միայն փորձեր ու ստուգումներ են կատարում, այլև ընտրում ու աճեցնում են սերմի տեսակներ, փորձադաշտե-րում ցույց են տալիս, թե կոլտնտեսությունն ինչպիսի բերք կա-րող է ստանալ: Սակայն կան և այնպիսի խրճիթ-լաբորատորիա-ներ, վորոնք վոչինչ չեն անում, կամ շատ թույլ են աշխատում: Պատի թերթը կարող է ոգնել, վոր խրճիթ-լաբորատորիան բա-րելավի իր աշխատանքը:

Խրճիթ-լաբորատորիայի խնդիրը նաև այն է, վոր ավելի մեծ թվով կոլտնտեսականների մասնակից անի փորձնական աշ-խատանքներին, հետաքրքրի ազրոտեխնիկայով: Մի՞թե պարզ չե-ր վոր հենց թերթն է, վոր այդ գործում կարող է ոգնել խրճիթ-լաբորատորիային:

Մի ժամանակ գյուղացին նույնիսկ «լաբորատորիա» բառը ճիշտ արտասանել չեր կարողանում, իսկ այժմ հազարմոր գյուղացիներ հաջողությամբ աշխատում են լաբորատորիանե-րում: Մենք պետք ե գիտությունն ամեն կերպ արմատացնենք կոլտնտեսությունում, հաշվի առնելով այն բոլոր ազրոնմիջոցա-ռումները, վոր հնարավոր են ավյալ վայրում:

ՏՐԱԿՏՈՐՆԵՐՆ ՈՒ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Իր ժամանակին Վլադիմիր Իլյիչը մեր գյուղի համար յե-րազում եր հարյուր հազար տրակտոր: Թե բոլչեկներն ինչ-պես են իրագործել կենինի այդ յերազանքը, կարելի յե դատել հետեւյալ փաստից: Հենց միայն այս տարի մեր գործարանները

Հյուղատնտեսությանը կտան 1 միլ. 933 հազար ձիու ուժի բնդհանուր կարողությամբ տրակտորներ։ Յեթե այդ վերածնք 15 ձիու ուժանոց տրակտորների, ապա դա կկազմի մոտ 130 հազար տրակտոր։ Յեթ այդ՝ մի տարբա ընթացքում։ Իսկ ընդամենը գյուղատնտեսության մեջ կաշխատի 400 հազար տրակտոր, չհաշված մյուս մեջնաները, վորոնց քանակը ևս ավելի պակաս թափում չի ավելանում։

Եատ ու շատ ըշջաններում տրակտորավարն արգեն գերակառող տեղ ե բռնում։ Այդ, ի հարկե, չի նշանակում, թե լծկանի նշանակությունը նվազել է։ Վո՞չ։ Մենք պետք ե ամեն կերպ խնամենք ու պահենք մեր ձիերն ու յեզները։ Զին մեդ դեռ պետք կդա նույնիսկ այն ժամանակի, յերբ մենք անչափ շատ տրակտոր կունենանք։

Թե մեզ մոտ տրակտորն ինչ աշխատանք ե կատարում, այդ կարելի յէ տեսնել հետեւյալ փաստով։ այս տարբա համար ՄՏԿայանների տրակտորային աշխատանքի պլան ե սահմանված 165,5 միլիոն պարմանական հեկտար վարի չափով (պայմանական վար ե կոչվում նրա համար, վոր տրակտորի բոլոր աշխատանքները ցանքը, փոցինը, քաղհանը և այլն նույնպես վերածված ե վարի միավորին, վորպեսզի ավելի հեշտ լինի հաշվել)։ Յեթե հաշվի առնենք, վոր Խորհրդային Միության բոլոր ՄՏ Կայաններն սպասարկում են ընդհանուր առմամբ մոտ 100 միլիոն հեկտար հող ունեցող կոլտնտեսությունների, ապա պարզ կլինի, թե տրակտորներն ինչպիսի հսկայական ոգնություն են ցույց տալիս կոլտնտեսություններին։

Տրակտորներն ու բարդ մեքենաները գտնվում են այն ՄՏ Կայանների տրամադրության տակ, վորոնք սպասարկում, են կոլտնտեսություններին։ Դրանից վորոշ պատի թերթերի խրժադրությունը սիսալ յեզրակացության են զալիս, թե իրենք չպետք ե զբաղվեն տրակտորներով։ Կարիք չկա ասելու, վոր այդ տեսակետը սիսալ է։ Ճիշտ ե, տրակտորները ՄՏ Կայանի տրամադրության տակ են գտնվում, սակայն աշխատում են կոլտնտեսությունների համար, ուստի և կոլտնտեսության համար ամենենին ել միենույն չե, թե ինչպես են աշխատում այդ տրակտորները։ Նշանակում ե թերթն անպարման պիտի գրի տրակտորները ցանքին նախապատրաստելու մասին։ Նախ և առաջ պետք ե հոգ տանել, վոր ամեն ինչ նախապատրաստված լինի տրակտորների

անընդմեջ աշխատանքի համար, վոր ապահովված լինի վառելանյութի մատակարարումը։ Անցյալ տարիները յերբեմն տրակտորները կանդ եյին առնում վառելանյութ ժամանակին չհասցնելու պատճառով։ Այս տարի կառավարությունը հատուկ վորոշում ե հրապարակել, վորով սահմանված ե վառելանյութն ըստ շրջանների մատակարարելու պլանը։ Այժմ մեծ կարպապահություն ու ճշտապահություն կլինի այդ գործում։ Աւրեմն՝ հարկավոր ե, վոր վառելանյութն ու ջուրն ել տրակտորին հացնելու վործը կանոնավոր լինի։ Խմբագլուխը պետք ե ծանոթանան ՄՏ Կայանների ու կոլտնտեսությունների միջև կնքած պայմանագրերին։ Այդ պայմանագրերում նշված են յերկու կողմերի պարտավորությունները։ Կոլտնտեսությունը պարտավոր ե նախորդք մարդիկ ու ձիեր հատկացնել այդ գործին։ Յեթ թերթի իր ժամանակին պետք ե խսուի դրա մասին։ Ամենից լավն ե նախորդք խորհրդակցել տրակտորային ջոկատի բրեգութիրի հետ, կամ ավագ տրակտորիստի հետ։ Թող նա գրի, թե կոլտնտեսությունն ինչ պիտի անի, վոր տրակտորների անընդմեջ աշխատանքն ապահովվի։

Այսուհետեւ, ս՞ի պիտի աշխատի տրակտորի վրա։ Լավագո՞ւյն տրակտորիստներն են ընտրված արդյուք։ Գուցե նրանց մեջ կամ անսպեաք, հետամնաց մարդիկ։ Դրա մասին իր ժամանակին պիտի ահազանգել թերթում։ Յեթե մենք անիտույթ ու լրդր մարդկանց կոլտնտեսային գոմերում աշխատել չենք թողնում, ապա այդպիսիներին առավել ևս մեքենաների վրա չպիտի թողնենք։

Իսկ տրակտորներն ի՞նչպես պիտի աշխատեն ցանքի ժամանակի։ Այդ ևս պակաս կարեռություն։ չունի կոլտնտեսության համար, հետեւապես, պատի թերթը դրա մասին ևս պիտի գրի։

Վերջին յերկու-յերեք տարբա ընթացքում մեզ մոտ տրակտորներն սկսել են զգալիորեն լավ աշխատել։ Կազմակերպված են մի շարք վերանորոգման արհեստանոցներ, ոժանդակ կադրեր, կան մեխանիկներ, պահեստի մասերն ավելի յեն չառացել։ Սակայն դեռ այժմ ել մեզ մոտ տրակտորիստները ճիշտ են ոգտագործվում։ Յեթե վարի ընթացքում գործը համեմատաբար լավ ե առաջ գնում, ապա ցանքի կամ փոցինելու ընթացքում իդուր տեղը շատ աշխատանք ե կորչում։ Այդ թերթեւ աշխա-

տանքներում տրակտորը ծանրաբեռնված չի լինում։ Այդտեղ աշխատանքն ավելի բարդ է, վորովհետև տրակտորը պիտի քաշի բարդ մեքենա։ Կոլտնտեսային կամ բրիգադային պատի թերթը սերտ կազ պահպանելով տրակտորային բրիգադի կամ ՄՏԿայանի պատի թերթերի հետ՝ պետք է աշխատի, վոր առաջին հերթին այդ աշխատանքները ևս բարելավվեն։ Քանի վոր մեզ մոտ տրակտորները շատանում են, նրանք ավելի մեծ չտպով պիտի կատարեն նաև այդ «թեթև» աշխատանքները—ցանքը, փոցխումը։ Այստեղ ել վորակի հարցը դրվում է ամենայն սրությամբ։ Խարակը (բաց թողումը) վարի ժամանակ ավելի հեշտ և նկատվում, քան ցանքի ժամանակ։ Ցանք անող տրակտորների աշխատանքը շարունակ կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթերի ուշադրության կենտրոնում պիտի լինի։

Տրակտորների արտադրողականության հարցը կոլտնտեսությունների համար խոշոր նշանակություն ունի։ Այսպես, անցյալ տարի յուրաքանչյուր տրակտոր միջին հաշվով 490 հեկտարի աշխատանք է կատարել (վերածված վարի)։ Շար է այս, թե՞ քիչ։ Այդ հարցին կարելի յե պատասխանել միայն համեմատություն անելով։

Ամերիկայի Միացյալ Նահանգներում յուրաքանչյուր տրակտոր տարեկան միջին թվով 90—100 հեկտարի աշխատանք է կատարում (վերածած վարի)։ Դրա պատճառն այն է, վոր կապիտալիստական հողագործությունը, վորտեղ հողը ցրված է և պատկանում է առանձին սեփականատերերի, խանդարում է տրակտորի լիակատար ուժագործումը։

Սոցիալիստական հողագործությունը—խորհանուեսություններն ու կոլտնտեսությունները—շատ և հեշտացնում տրակտորի աշխատանքը և շատ բարենպաստ պայմաններ են ստեղծում գյուղատնտեսության մեջ մեքենաներ ոդտագործելու համար։ Ահա թե ինչու մենք յուրաքանչյուր տրակտորով 4—5 անգամ ավելի արտադրանք ենք տալիս, քան ամերիկացիք։ Այստեղից պարզ յերկում է սոցիալիստական տնտեսության առավելությունը կապիտալիստականի և մանր սեփականատերականի նկատմամբ։

Սակայն, չնայած դրան, դեռ վաղաժամ է պարծենալ, թե մենք տրակտորի բարձր արտադրականություն ենք տալիս։

Ապոցուցված է, վոր մեր տրակտորային պարկը յուրաքան-

չյուր տրակտորով կարող է վոչ թե 490, այլ 800 հեկտարի աշխատանք կատարել, այսինքն՝ յերկու անգամ ավելի։ Յեվ այդ վոչ թե յենթադրություն է, այլ գործնականում ապացուցված փաստ։ Մենք արդեն շատ տրակտորիստներ ու ամբողջ բրիգադներ ունենք, վորոնք անցյալ տարի 15 ձիու ուժանոց տրակտորով 1000 հեկտար և ավելի վար են արել։ Յեվ դրա կողքին քիչ չեն նաև այնպիսի տրակտորիստներ, վորոնք տրակտորին 200—300 հեկտար են ավել։

Այժմ, յերևակայեցեք, թե ձեր կոլտնտեսությունում տրակտորներն, ասենք թե 300 հեկտար են մշակում։ Իսկ յեթե նրանք ինչպես հարկն ե աշխատեն, կսկսեն տալ 300 հեկտար ևս։ Այդ ի՞նչ և նշանակում։ Այդ նշանակում է, վոր դրանով տրակտորները վոչ միայն կթեթևացնեն լծկանների ու մարդկանց աշխատանքները, այլ և յերկու անգամ ավելի արագ կավարտվի ցանքը։ Իսկ այդ եւ, իր հերթին, նշանակում է, վոր բերքը կբարձրանա զգացի չափով։

Իսկ չե՞ վոր այդ հնարավոր է անել, վոր տրակտորներն աշխատեն իրենց լրիվ ուժով ու կարողությամբ։ Պատի թերթը հատուկ համառությամբ ու սիստեմատիկաբար պիտի պայքարի դրա համար։

Այստեղ շատ բան է կախված տրակտորիստներից։ Նրանք դեռևս չեն կարողանում, ինչպես հարկն ե, տրակտորները խընամել, պակասում ե կուլտուրականությունը։ Մի շաբք տրակտորիստների նայելիս՝ առաջին իսկ հայցքից կնկատվի այդ։ Հաճախ նրանք կեղտուտ, մաղություն են մնում։ Կարելի յե մտածել, թե այդ տրակտորի աշխատանքի հետ ուղղակի կազ չունի։ Բայց վո՞չ։ Կազ ունի։ Մեքենան մաքրություն ե սիրում, իսկ յեթե տրակտորիստն ինքը կեղտուտ է, ապա նա մեքենան ել մաքուր չի պահի։ Միանգամայն ժամանակն է պատի թերթում հարցուցելու տրակտորի մաքրության և տրակտորիստի բարեկրթության հարցը։

Մենք շատ ենք խոսել տրակտորիստների հետ, հարցել ենք, թե նրանք ինչու յեն կեղտուտ։ Պատահական տրակտորիստ, վոր ձեռքը թափ տալով՝ պատասխանել է.

— Ե՞ն, բան գտաք դուք ել, ի՞նչ է, յես որիորդ եմ։

Բայց մի մասն ել պատասխանել ե.



— Շատ կցանկանայի լվացվել, բայց վո՞րակը լվացվեմ :

Յեկ այդ ձիջու է : Տրակտորիստը, վորի ձեռքերն ու յերեսը յուղու են, սառը ջրով լվացվել չի կարող : Թերթերը պետք է հարց բարձրացնեն, վոր տրակտորիստներին տաք ջուր տրվիս ոճառ, մոխրաջուր : Միթե՞ դժվար է այդ պատրաստել : Նույն կինը, վոր տրակտորիստների համար ճաշ և պատրաստում, կահարող է և տաք ջուր պատրաստել :

Սա փոքր գործ չի : Տրակտորիստի աշխատանքը զժվար աշխատանք է : Յեկ յեթե նա աշխատանքից հետո մաքուր լվացվի, չորերը փոխի, մաքուր ճաշի և պատկի քնելու հաճելի տնակում, մաքուր անկողնում, նա գեղի մեքենան ել ուրիշ վերաբերմունք կունենա և մեքենան ավելի լավ կաշխատի :

Տրակտորիստի մաքրությունն, իհարկե, լուսը չե, ինչ վոր հարկալոր և տրակտորների արտադրողականությունը բարձրացնելու համար : Սակայն մենք այս որինակը նրա հսմար բերինք, վոր յուրաքանչյուր պատի թերթի խմբագիր իմանա, թե պատի թերթն ինչպես պիտի պայքարի տրակտորի արտադրողականության բարձրացման համար, վորպեսզի յուրաքանչյուր կոլտնուային պատի թերթի խմբագիր հասկանա, վոր ցանքի կազմակերպման և վոչ մի հարց չպետք է վրիպի թերթի տեսադաշտից :

ՄԻ ՔԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այժմ անցնենք վերջին և կոլտնուային պատի թերթերի համար թերեւս ամենասուր հարցին . ո՞վ պետք է պատի թերթը պատրաստի դարնանացանի ընթացքում : Այս հարցը քննենք ընդհանուր կոլտնուային և առանձին բրիգադային թերթերի համար առանձին-առանձին : Սկսենք վերջիններից :

Ո՞վ է բրիգադային պատի թերթի խմբագիրը : Մեծ մասամբ ակտիվ կոլտնուասական-կոմունիստ, կոմյերիտական կամ ոնկուսակցական : Յանքի ընթացքում նա մյուսների պես խիստ դրազված պիտի լինի : Ել, ուրեմն, յերբ պիտի նա կարողանա թերթ պատրաստել : Քանի գեռ բրիգադը դաշտ չի դուրս յեկել և ամեն ինչ գյուղումն ե գտնվում, դեռ կարելի յե ժամանակ գտնել : Բայց, ահա, բրիգադը դաշտ դուրս յեկավ և խմբագիրն ամբողջ որը քայլում է փողին հետեւց կամ տրակտորի համար վառելանյութ և կրում : Այդ դեպքում ինչպես վարվել, յե՞րբ պատ-

քաստել թերթը : Կրկին անդամ հարցը հանգում է նրան, վոր խմբագիրը մենակ չալիափի լինի, վոր նա իր ողնականները, իր ակտիվը պիտի ունենա :

Բրիգադային դաշտակայանում համարյա միշտ լինում են մշտական մարդեկ—հաշվառու, խոհարար, պահակ, սերմացուն դիշերները պահող, ձիազան, յերբեմն ել՝ բրիգադիրը : Յեթե կոլտնուասականը մի թղթակցություն ե բերել, այդ ընկերներից մեկը պիտի լինի, վոր ընդունի թղթակցությունը : Պատի թերթի խմբագրին մեծ շափով կարող է ողնել հաշվառուն, վորպես վարժ գրադեա մարդ : Նա կարող է մինչև խմբագրի գալն ամեն ինչ նախապատրաստել, արտագրել և տալ խմբագրին՝ կարդալու և հաստատելու :

Նույնիսկ ամենայեռուն շրջանում բրիգադում կլինեն մարդիկ, վորոնք ժամանակ կդառնեն թերթը ձևավորելու համար : Միայն հարկավոր է նրանց մեջ հետաքրքրություն ստեղծել զեղուայի այդ գործը : Իսկ ինքը՝ խմբագիրը, յեթե զբաղված է արտադրության մեջ, որինակ՝ ցանք է անում, կամ տրակտոր և աշխատեցնում, այնուամենայնիվ կարող է թերթը խմբագրել, ուղղություն տալ, կազմակերպել գործը : Այստեղ հիմնական կանոնը հետեւյալն է : Մեծ թղթով մարդիկ, և առաջին հերթին ստախանովականներին, ներգրամել թերթի աշխատանքների մեջ, վորպեսզի իրոք պատի թերթը դառնա համարբրիգադային ընդհանուր մի գործ :

Զպետք է կարծել, թե խմբագիրը, կամ թերթում գրողը և կամ թերթ պատրաստողն ինչ վոր մի առանձնահատուկ մարդ է : Այդ սիալ ու վնասակար կարծիք է : Բրիգադի յուրաքանչյուր անդամը—և՛ ձիազանը, և՛ պահակը, և՛ խոհարարը կարող են դրել իրենց պատի թերթում : Իսկ խոհարարն առավել ես : Նա բրիգադում ամենաչարգուն ու ակտիվ մարդն է : Նա ամբողջ որը դաշտակայանումն ե լինում, շատ բան և տեսնում, ուրեմն և շատ բան զիտես : Յեթե մենք աշխատում ենք, վոր յուրաքանչյուր խոհարարուհի պիտությունը կառավարելուն մասնակցի, ապա առավել ևս պիտի աշխատենք, վոր կոլտնուասության յուրաքանչյուր խոհարարուհի մասնակցի պատի թերթի աշխատանքներին : Թերթի նյութերը հալաքելու համար պետք է ողտագործել նաև վորակի տեսչին : Ծերունիներն ստուգում են բոլորի աշխատանքը և որվա ընթացքում տեսնում են բոլորին, խոսում բոլորի հետ,

ուստի և հեշտությամբ կարող են թղթակցությունները բերեր թերթին և հենց իրենք ել պակաս թղթակցություններ չեն գրի:

Մի քիչ այլ կերպ ե ընդհանուր կոլտնտեսային պատի թերթի խնդիրը: Նրա համար ավելի շատ դրագես մարդիկ կդանդեն և կարելի յե այնպիսի խմբագիր ընտրել, վորը ցանքի ընթացքում կարողանա բավական ժամանակ հատկացնել թերթին: Այստեղ արդեն խմբագրին կարող են ոգնել հաշվետարը, ուսուցիչները, մեխանիկը, ագրոնոմը: Ընդհանուր կոլտնտեսային պատի թերթի հիմնական աշխատակիցները շարքային կոլտնտեսականներն են, սակայն թերթը պատրաստում ու ձեռլորում են ավելի դրագետ մարդիկ: Կոլտնտեսային թերթի համար կարելի յե և նկարիչ գտնել, վորը ծիծաղաշրժ ծաղրանկարներ կնկարի: Այդպիսի նկարները թերթը շատ են աշխատացնում:

Սակայն կոլտնտեսային թերթի համար մի ուրիշ դժվարություն ե առաջանում: Յանքի ժամանակ մարդիկ զաշտումն են գտնվում: Բրիգադային թերթն աշխատանքի կենորոնումն ե. վորքան ել այս կամ այն ողակը հեռու աշխատելիս լինի, բրիգադային թերթի աչքից չի մրիպի: Բայց ի՞նչպես վարպի կոլտնտեսային պատի թերթը: Յեթե նա մնա գյուղում, մինչեւ ցանքի վերջն այդ թերթը կարդացող չի լինի: Յեթե դաշտ ուղարկվի, կկարդա մի բրիգադ: Ինչպէս անել: Այս հարցի պատասխանը գտնել են հենց իրենք՝ պատի թերթերը և մենք միայն այստեղ հաղորդում ենք այդ փորձը: Ընդհանուր կոլտնտեսային պատի թերթը պետք ե փակցվի մի տախտակի և ցանքի ընթացքում դառնա շարժական թերթ: Յեթե դաշտում յերեք բրիգադ ե աշխատում, նշանակում ե՝ թերթը պետք ե փոխադրել բրիգադից բրիգադ: Դրա համար առանձին փոխադրական միջոցներ հարկավոր չեն: Թերթն ուղարկելու բազմաթիվ առիթներ կլինեն. ասենք թե կոլտնտեսության նախագահը, կամ պահետապետը, կամ ագրոնոմը դաշտ ե գնում և կամ ձիերին կեր են տանում—կարելի յե թերթն ել ուղարկել նրանց հետ: Յեկ այդ կարելի յե որպական մի քանի անդամ անել: Զե՞ վոր ցանքի ընթացքում պատի թերթն յուրաքանչյուր համարում պետք ե հաղորդվի ամեն մի բրիգադի ցանքի ընթացքը: Պատի թերթը, վորքան կարելի յե, հաճախ պիտի լույս ընծայել, նույնիսկ ամեն որ, վորպեսզի

յուրաքանչյուր բրիգադ իմանա, թե ինչպես են աշխատում ժյուսները և ինչպես ե աշխատում ամբողջ կոլտնտեսությունը:

Անկատակած այստեղ մեծ ոգուտ կտա փոքրիկ թերթիկներ լույս ընծայելու փորձը, վորոնք կոչվում են «Կայծակ» և շատ կոլտնտեսություններում արդեն անում են այլ: Բազմաթիվ կոլտնտեսությունների անցյալ տարվա փորձը ցույց ե տալիս, վոր այդպիսի թերթիկներ կարելի յե լույս ընծայել նույնիսկ որպական 3—4 անգամ, իսկ «Կայծակը» կարելի յե կարգալ մի քանի բոպեյում:

Այն ել պիտի ասել, վոր պատի թերթի խմբագրությունը ցանքին պիտի պատրաստվի նախորոք, այնպես, ինչպես ամբողջ կոլտնտեսությունն ե նախապատրաստվում: Մենք տեսել ենք, թե ինչպես մի շարք կոլտնտեսություններում, յերբ փորձնական տագնապ են տվել ու բրիգադները դաշտ են դուրս յեկել, նորոգված ցանիչների, գութանների, բոլոր կոլտնտեսականների կողքին իր պատրաստի պայուսակով կանգնած ե յեղել նաև բրիգադային պատի թերթի խմբագիրը: Նրա պայուսակում յեղել ե թերթի «ինվենտարը»—թուղթ, մատիտ, ներկեր, մկրատ և այլն, ինչպես և թերթը լույս ընծայելու պլանը: Փորձնական տագնապին պատի թերթի այսպիսի մասնակցությունը խիստ նշանակալի յե. այդ ցույց ե տալիս, վոր նախ իմբագիրը նախորոք պատրաստվել ե իր գործին անցնելու և նշանակում ե, վոր թերթն իրոք լույս ե տեսնելու կանոնավոր և ոգնելու յե ցանքն ավելի լավ ու արագ կատարելու գործին: Մյուս կողմից՝ թերթի այդ մասնակցությունը ցույց ե տալիս, վոր նա արդեն բրիգադի աշխատանքի մի հիմնական մասն ե դարձել, վոր առանց թերթի այլիս յուլ գնալ չի կարելի, վոր թերթը դարձել ե կոլտնտեսային աշխատանքի մի անհրաժեշտ գործոնը: Սա մեծ պատիվ ե թերթում և՛ պատի թերթերին, և՛ նրանց, ովքեր աշխատում են այդ ուղղությամբ:

Դժբախտաբար զեռես շատ կոլտնտեսային ու բրիգադային թերթեր չեն այդպես լավ աշխատում: Դեռ շատ կան թույլ պատի թերթեր:

Պատի թերթերը պետք ե ամեն կոլակության մնացորդների գեմ մղվող պայքարում, կոլտնտեսության բոլոր թշնամիների գեմ մղվող պայքարում, բոլշեկիյան կոլտնտեսությունների և կոլտնտեսականների ունեոր, կոլտուրական կյանքի համար մըլ-

վող պայքարում : Անհրաժեշտ է , վոր ներկա դարնանացանի ընթացքում բոլոր պատի թերթերն աճեն ու ամրապնդվեն այսպես , ինչպես աճում ու ամրապնդվում են մեր կոլտնտեսությունները :

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Պատի թերթերի ինուրների մեջ ի՞նչ փոփոխություն է յեղել այս տարվա ցանքի ընթացքը լուսաբանելու հարցում , նաև սորդ տարիների հետ համեմատած :

2. Վո՞րն ե պատի թերթերի գլխամոր խնդիրն այս տարի :

3. Ինչու միայն խորհրդային յերկրում կարելի յե անսահման ավելացնել բերքատվությունը , իսկ կապիտալիստական յերկըներում բարձր բերքը , ինչպես և անբերիությունն աղետ են բերում դյուզացիությանը :

4. Պատի թերթերում ինչպես ոգտադործել հարևան առաջավոր կոլտնտեսությունների փորձը՝ բերքատվությունը բարձրացնելու համար :

5. Պատի թերթն ինչպես պիտի պայքարի սերմացույի բարձր վորակի համար :

6. Ինչի՞ համար են սերմադաշտեր առանձնացվում և ի՞նչ պիտի գրի թերթը դրանց մասին :

7. Ի՞նչ գիտեք դուք ակադեմիկոս Լիսենկոյի աշխատանքի մասին , ի՞նչ ե տալիս յարովիզացիան և ինչպես պայքարել յարովիզացան ճիշտ կիրառելու համար :

8. Զեր կոլտնտեսությունում բերքի բարձրացման ի՞նչ թագընված հնարավորություններ կան : Թերթն ի՞նչ պիտի անի այդ հնարավորությունների հայտաբերման ու ոգտադործման համար :

9. Պատի թերթն ինչպես պիտի աշխատի ցանքի ժամկետները կրնատել և ինչպիսի ծայրահեղությունների ու ժամկետների խախտումների գեմ պիտի պայքարի :

10. Պատի թերթն ի՞նչ պիտի ստանա ազգոնոմից և ի՞նչ պիտի գրի նրա աշխատանքի մասին :

11. Հատկապես ինչի՞ մասին եք դուք մտածում գրել ձեր պատի թերթում՝ գարնանացանի աղբոտեխնիկայի վերաբերյալ :

12. Ինչպես պիտի ողնել խրճիթ-լաբորատորիային , վորպես զի նա կարողանա ազրոտեխնիկան արմատացնել կոլտնտեսային արտադրության մեջ :

13. Վորո՞նք են տրակտորային պարկի աշխատանքի գլխավոր թերությունները : Թերթն ի՞նչ պիտի անի այդ թերությունները վերացնելու համար :

14. Ի՞նչ պետք ե գրել տրակտորիստների մասին և թերթն ի՞նչո՞վ պիտի տրակտորիստներին ողնի իրենց աշխատանքներում :

15. Ի՞նչ ե ստախանովյան շարժումը կոլտնտեսություններում : Զեր պատի թերթն ինչպես և պայքարում ստախանովյան աշխատանքի մեթոդների ըստ ամենայնի ծավալման համար :

16. Ցանքի ժամանակ ինչպես կազմակերպել բրիգադային ու ընդհանուր կոլտնտեսային պատի թերթերի լույս ընծայումը :

ՀՀ Ազգային գրադարան



NL0143963

333

14989

ӘРЧӨЛКӨМ 6 201-

Б. РЕЗНИКОВ

Стахановская весна и задачи колхозных
стенных газет

Издание КП(б)А „Хорурдаин Айастан“